

13947-  
27 JUN 2013

58

5-50

вр.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Բ. Գ. Կ. ՄԻՈՒԹԵԱՆ

Издание Б. А. К. Союза

58

5-50

|                         |      |
|-------------------------|------|
| Հրատարական Մասնաճիւղի   | № 10 |
| Издательской Секцией    | № 10 |
| Ժողովրդական Գրքերի շար. | № 7  |
| Народная Библиотека     | № 7  |

Կ. Կ. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ

ԲՈՒԱՎԵՆ ԱԳԻԱՐՀ

Տառական Սպազմութիւն

Գ. Տպագրութիւն



Բ. Ա. Գ. Ո. Ի.

1910

EROS JUL 5



Իմ ընթերցող՝ երբ որ ամառը կամ աշնանը անցնում ես փողոցով ու աչքդ ձգում մրգավաճառների թարախներին, չեմ կարծում, որ մի րոպէ քո ուշքը զրաւած չլինին նրանց մէջ զարսուած ու կուտակած խնձորն ու տանձը, կեռաօն ու թութը, դամբուխն ու ծիրանը, խաղողն ու թուզը, նուռն ու սերկեւիլը եւ այլ համեղութթուաշ պտուղները, որոնք մեր երկրի բերքերն են եւ մեր սեղանների զարգերը։

Որչափ դիւրեկան են նրանք խանութներում, թաքախների մէջ կամ մեր սեղանի վրայ, հարիւրապատիկ աւելի հրապուրիչ են այգիներում ծառերի վրայ բեռնաւորուած ժամանակ։ Սրդարեւ մտիր մի մրգեղէնի այսի եւ ահա քո առաջ մի նոր աշխարհ կը բացուի, մի աշխարհ՝ ուր բնութիւնը զարմանալի ձեւ ու տեսք է տուել ամէն մի ծառին, ամէն մի պտղին ու տերեւին։ մի տեղ տեսնում ես երկրի կրծքից բարձրացել հազարաւոր ճշներ ու սատեր է ձգել ընկուղենին ու մանրիկ կաղաղապատընկոյզներով ծածկուել, միւս տեղ ճղճղնուել լայնատերեւ թղենին՝ սեւ ու սպիտակ թղերը հասունութիւնից ճաքճաքել, փշոտ նոնենու թիֆից գլխիվայր կախուել են տափով պատած նոները, հոնի ծառի վրայ յակինթի պէս փայլում է հոնը, խաղողի վաղը կամ գետնի վրայ փոել է իր բարունակը կամ բարձրացել օծի պէս փաթթաթուել Մջապատող ծառերին՝ կարմիր ու ճերմակ ծիթերը կախել

զէպ ներքեւ. եւ ի՞նչու մի մի թուեմ, մօտեցիր որին ու-  
ղում ես՝ գեղձենուն թէ թթենուն, կեռասենուն թէ ծի-  
րանի ծառին, զկոնուն թէ սերկեւլուն եւ ամենքը կը  
հիացնեն քեզ իրանց տեսքով, իրանց պառւղներով։

Ապշած նայում ես այդ կախարդող ծառերին եւ  
մէկից միւսը անցնում, բայց զիտե՞ս, ինչպէս են դրանք  
բռւսել, աճել ու մեծացել այդտեղ։ Կանչի՞ր այդեւալանին,  
հարցո՛ւր նրան եւ նա քեզ շատ ու շատ բաներ կըպատմէ  
իր այգու մասին։ Նա զիտէ ամէն մէկի տարիքը, կեան-  
քըն ու պատմութիւնը, նրա ձեռքով է անկուել այդ  
այգին, նրա ինամքով են մեծացել այդ ծառերը. նա սի-  
րում, պաշտում է զրանց ու չէ զանազանումիր հարազա-  
ընտանիքից, իր սիրելի զաւակներից. եւ արդարեւ իրա-  
ւունք ունին այն մարզիկը, որ ասում են, թէ ծառն էլ մի  
տեսակ երեխայ է եւ այգեպանը կամ անկողը նրա ինա-  
մակալ հայրը. Ինչպէս որ հայրը հոգում է զաւակի հա-  
մար, նրան կրթում, ճանապարհ է բացանում ժամանա-  
կին պաղաքրելու, նոյնպէս եւ բարի այգեպանը մի մա-  
տաչափ տունկը ինամելով հասցնում է կատարեալ հա-  
սակին, երբ ծլում, ծաղլում, պատւղ է տալիս, Եթէ թողնի  
մի հայր իր զաւակին անխնամ, նա կը կորնչի յափտեան,  
եթէ ուշ զարձնէ մի այգեպան իր ծառին, ջրէ, հողը չպա-  
րարտացնէ, վնասակար բոյսերը չնեռացնէ նրանից եւ ահա  
մանուկ-տունկը կը չորանայ. . .

Թողնենք մի րոպէ այգին ու այգեպանը եւ մտնենք  
անտառը. այգտեղ էլ բուսական աշխարհը կը բանայ մեղ  
իր գեղեցկութիւնը, իր հրաշալիքը, բայց մի աչքերդ դար-  
ձու այս ու այն կողմը եւ կրտեանես, որ ամէնինչ խառ-  
նիխուռն է, ամէն ինչ ձախ ու ծուռ, այդտեղ էլ կը-

գտնես մեր տանձենին ու ինձորենին, խաղողի վալին ու  
սերկելին, հոնին ու զկոփին, բայց ի՞նչպէս, ի՞նչ դրու-  
թիւնով. փորձիր բարձրանալ եւ շատերը կըծակծենք իրանց փշերով. բերանդ առ նրանց պառւղները եւ կը-  
տեանես՝ որը թթու է, որը դառանամ, որը ուտերու ան-  
պէտք, չունին այն գեղեցիկ տեսքը, այն քաղցր ու դու-  
րեկան համեր, ինչ որ այդու պատուղները ունեն. . ինչու.  
որովհետեւ սրանք վայրենի են, սրանք անմշակ  
են, սրանց ոչ ոք չէ նայել, ոչ ոք չէ խնամել :

Հանի՞ր վայրենի փոքրիկ ինձորենին, այդին տա՛ր,  
կրթի՞ր նրան ինչպէս հարկնէ եւ կրտեանես, որ նա ա-  
ւելի կը զուարթանայ, աւելի սիրուն պատուղ կտայ քան  
թէ տոաչ. Անտարը փոխաղրի՞ր կամ թէ ուշ մի դարձ-  
նիր քո այգու մի ընտիր ինձորենուն եւ շատ չի քաշիր,  
նա տիտուր կերպարանք կառնէ, իր խոշոր ու համեր պը-  
տուղները կը կորցնեն առաջուան յատկութիւնը, ճղներն  
ու ոստերը ճամփերի կը փոխուեն, նա վայրենի կըգառնայ:

Այսպէս մի մշակուած ծառ, մի թուփ, մի  
բոյս մենք կ արող ենք վայրենացնել եւ  
միեւնոյն ժամանակ մի վայրենին, մի անմշակը  
կրթելով, մշակելով ընտանի շինել.

Բայց միայն պաղատու ծառերը չեն, որ մեզ օգուտ  
են տալիս եւ որոնց համար միայն պէտքէ մեր ինամքը.  
Նայիր ան սոսի ծառին, կաղնուն, թեղօշին, բարգուն եւ  
այլ հաղարաւոր մեծ ու փոքր անպատուղ ծառերին, թիե-  
րին ու կանաչեղինին, որ լի են մեր սարերն ու ձորերը,  
զաշտերն ու անտառները, արդի՞օք նրանք մեզ ոչինչ  
չեն տալիս. Միթէ հարկաւոր է լիշել թէ այն վայրենի  
ծառերից են շնուել մեր աների մնծ մասը, մեր կահ կա-

րասիքը, այն ամէն փայտեղէն բան, որ գտնւում է մեր շուրջը, պէտք է ասել, որ այն վայրենի ծառերն են, որ ամառը պաշտպանում են մեզ արեւի այրող ճառագայթ-ներից, իսկ ձմեռը դաժան ցրտերի երեսից, նրանցից են շինուած այն նաւերը, որ պտտում են ծովերի, գետերի, լճերի երեսին, նրանցից են այն կառքերը, որ սրանում են ցամաքի վրայ. նրանք են, որ պաշտպանում, օժեւան են տալիս այն հազարաւոր թռչուններին, միջաներին, կենդանիներին, որոնցով պարծենում է մեր աշխարհը. բայցի այդ խոտերն ու բանջարներն են, որ մեղ մնունդ են տալիս, մեր շատ հիւանդութիւնները բժշկում. ո՞հ շատ շատ երկար ու ձանձրայի կըլինէր, եթէ մի մի յիշէի այն օգուտները, որ ներկայացնում են մեղ քոյսերը, բաւական է միայն ասել՝ որ նրանք են մեր կեանքի աղբւը և բուրը եւ առանց բուսակ ան աշխարհի մենք մի օր էլ չէինք կարող ապրել աշխարհի սիրահիս երեսին:

Թէ մեզանից ամէն մէկը, մեծ լինի թէ փոքր, գիւղացի թէ քաղաքացի, արհեստաւոր թէ վաճառական, տանուտէր թէ տանտիկին, պէտք է սիրէ, պէտք է ինամէ այդ աշխարհը, որ այդքան բարիք է մեղ տալիս, այդ կարծեմ հասկանալի է: — Բայց ինչպէս ինամեմ, գուցէ կը հարցնես ինձ. քանի որ նրան լաւ չեմ ճանաչում, նրա ցան ու դարմանը ինձ անյացտ է:

Դիմիր բուսաբանին, այգեպանին, պարտիղպանին, երկրագործին, այն ռասմիկ զիւղացուն, որի տղիտութեան վրայ գուցէ շատ անգամ ծիծաղել ես, եւ նրանք ցոյց կտան քեզ, Բայց այդ նեղութիւնը դու մի՛ քաշիր, սիրեմ ընթերցող, ես ինքո կը զիմեմ նրանց եւ կաշխատեմ

որչափ կարելի է օգուտ քաղել այդ փորձառու մարդկանցից եւ հասկանալի կերպով ներկայացնել քեզ այն պայման-ները, որոնք անհրաժեշտ են զիտենալ, երբ մէկը ուղում է մի այգի տնկել, մի ծառ, մի բոյս մշակել եւ կամ թէ հետաքրքրում է լոկ նրա կեանքը իմանալ եւ ոչ միայն նրա արտաքին կեանքովը զուարձանալ, նրա պառողը ճաշակել:

Ես բուսական աշխարհից առաջ կը բերեմ միայն Անմշակ ծառը, որ առանց մարդկային որեւէ միջնորդութեան հետզհետէ աճում է իր սերմը ընկնելու օրից սկսած մինչեւ իր պատող տալը եւ ապա ցոյց կըտամ, թէ ինչ պայմաններ են հարկաւոր, որ այդ անմշակ ծառը մշակուի կամ ուրիշ խօսքով՝ մարդու ձեռքով կրթուի, ընտանի գառնալ:

## ԹՈՒՍԱԿԱՆ ՍՑԻԱՐՑԻՑ

ԱՆՄՇԱԿ ՈՒ ՄՇԱԿՈՒԱԾ ԾԱՌԻ ԿԵԱՆՔԸ

ԱՆՄՇԱԿ ԾԱՌԻ

Ա.

ԲՈՒՍՍԿԱՆ ՀՈՂ.

Բուսական հող ասում ենք այն հողին, որի  
մէջ եթէ մի սերմ կամ կորիդ է ընկնում, նրան  
աճելու կարողութիւն է տալիս։ Այդ հողը գլխա-  
ւորապէս չորս զանազան նիւթերից է բաղկացած,  
այն է՝ կաւից, կրից, աւազից և սևուցքից։

1. Կաւը այն գեղնաւուն, պարարտ, փա-  
փուկ ու կպչուն հողն է, որ երբ ձեռքում հուփ  
ենք տալիս, նրա վրայ մնում է մեր ձեռքի թո-  
ղած հետքը։ Նա բնական ձեւով շատ ջուր է  
պարունակում իր մէջ և երկար ժամանակ խոնա-  
ւութիւն պահպանում, բայց չորանալուց քարի  
պէս պնդանաւմ, ամրանում է։ Այդ յատկութեան  
համար է, որ մեզանում և թէ ուրիշ երկրներում  
բրուտները շինում են զանազան ամաններ՝ հա-  
սարակ փարչից սկսած մինչև ունկնաւոր կժերն  
ու հաստափոր կարասները։

Կաւի վրայ շատ դժուար է վարուցանք աշելը, նա թաց ժամանակ ջիլ է ու կպչում է գործիքներին, իսկ երբ կորցնում է խոնաւութիւնը, շատ դժուար է փշրուում, սաստիկ ձմեռ ժամանակ նա ընդունում է ցրտութիւնը և բոյսերին ցրտահարում, իսկ երաշտ ամռանը ճաքճքում է ու բոյսի արմատները կտրտում, բանում:

Կաւը առանձին վերառած ոչինչ չէ աճեցնում, միայն հողի մէջ եղած միւս նիւթերի հետ խառն մի շատ ուժեղ տարր է հանդիսանում բոյսի համար։ Այն հողը, որի մեծ մասը կաւն է, առևում է կաւային հող կամ պարարտ երկիր։

2. Կիրը շատ տեսակ ունի, բայց բուսական հողի կազմութեան մէջ միայն երկուան են մըտնում. քարկիրը՝ որ փշրուում է գործիքների միջոցով կամ մի կոշտ բանի հարուելուց և կաւիճը, կրի այն փփրուն տեսակը, որին դիպչելուց թողնում է իր փոշին մեր ձեռքի ու շորի վրայ։

Կիրը նոյնպէս առանձին վերառած՝ ոչինչ չէ աճեցնում, միայն խառնուրդ եղած ժամանակը օգնում է։ Կիրը շատ ջուր է ընդունում իր մէջ և այն յատկութիւնն ունի, որ արեի տաքութիւնը վրան քիչ է ներգործում, ուստի բոյսերը հով են մնում կրային հողում։ Հեշտ է ճանաչել կրային հողը իր սպիտակ գոյնից։

3. Աւազը գտնելում է հողի մէջ երբեմն շատ խոշոր ձեռվ, երբեմն էլ շատ մանր, բայց նա չէ կարող աճեցնող գորութիւն ունենալ, եթէ մի աստիճան մանրութիւն չունենայ։ Խոշոր ձեռվ նա առևում է աւազաքար, կայծաքար, երկաթաքար, որոնք անօդուտ են բոյսերին, մինչդեռ մանր աւազը հողը փխրուն է շինում, հեշտացնում է հերկելու աշխատութիւնը, նա չէ կպչում գործիքին, որովհետեւ ամուր է, նա չէ ճաքճքում կաւի պէս չորային եղանակներին և չէ ցեխանում անձրեսծ ժամանակ, նրանից հեշտութիւնով է թափանցում թէ չերմութիւնը և թէ ջուրը՝ իր հետ տանելով բոյսի արմատներին շատ մնագարար մասերը։ Այն գետափնը, որ աւազային է՝ առևում է աւազուտ տակութագութեան կամ կողիները, գետերի, լճերի և ծովերի ափերը։

Աւազը առանձին վերառած՝ այնպէս չէ, ինչպէս կաւն ու կիրը, որոնք բոլորովին աճեցնող յատկութիւն չունին, միայն այս կայ, որ բոյսը նրա մէջ շատ թոյլ է և պտղատու ծառը հազիւ մի քանի տարի կապրի, եթէ արդէն պատրաստ տնկելու լինինք մէջը. ծառը մինչև անդամ ծաղիկ կտայ, բայց չէ կարող պառղ հացնել։

4. Երբ բուսական մարմինները, ինչպէս են տերեւ, ծաղիկ, ճիւղ, արմատ, խոտ, սկսում են

խոնաւութիւնից փտել, առաջացնում են մի գորշ կամ սևագոյն նիւթ, այդ նիւթին ասում են սեւուցք:

Սեւուցք են կաղմում և մեռած կենդանիների մնացորդները, անձրեի և քամու բերած ամեն տեսակ փշրտանք, միջատներից, զեռուններից ու սողուններից դուրս եկած հեղանիւթը, երբ նրանք խժբժում են հողի երեսին և կամ քաշում իրանց ստորելկրեայ բները: Այս բոլորը միամիանց վրայ բարդուելով կաղմում է սեւուցքի մի խաւ, որ առաջինների հետ խառն, շատ բերբե է շինում հողը, մինչդեռ առանձին վերցրած կաւի ու կրի պէս աճեցնող զօրութիւն չունի:

Սեւուցքով խառն հողը ասւում է սեա հող, որ իր սե գոյնի շնորհիւ շուտով է տաքանում. որչափ այդ յատկութիւնը օգտակար է ցուրտ երկիրների համար, այնքան վնասակար է տաք երկիրներում, որովհետև տաքութիւնը շուտով ցամաքեցնում է խոնաւութիւնը, որ նոյնպէս անհրաժեշտ է բոյսի համար:

5. Բացի այս չորս գլխաւոր նիւթերը, բուսական հողի մէջ կան նաև փոքր բանակութիւնով եւ շատ երկրորդական բաներ, ինչպէս են՝ երկաթ, որ զանազան գոյններով ներկում է հողը, ծծումք, փոսփոր և այլ աղեր, որոնք զանազան

դերեր են կատարում բոյսերի աճելութեան մէջ, բայց սրանցից շատերը որոշուած չեն դեռ, ուստի աւելորդ ենք համարում դրանց մասին խօսելը:

6. Ասացինք որ կաւը, կիրը, աւազը և սեւուցքը առանձին վերառած՝ անպտղաբեր են, միայն միացած ժամանակը աճեցնելու ընդունակութիւն ունին: Երբ սրանցից մէկը կամ երկուսը պակասում է հողի մէջ կամ թէ մէկից չափազանց կայ, միւսներից շատ քիչ, այնպիսի հողին ասում են անպատրաստ հող, որը պէտք է ուղղել, համեմել, արհեստական միջոցով պատրաստել, որ հաւասարակշուութիւն պահպանուի նրա մասերի մէջ: Թէ այդ բանը ինչպէս պէտք է անել, մենք ցոյց կըտանք երբ մշակուած ծառնի համար կը խօսենք:

Բ.

ՕԴԵՐԵՒՈՅՑԹՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ.

Մի բոյս աճելու համար բաւական չէ միայն բուսական հող. ոչ պակաս դեր են խաղում նրա կեանքի մէջ և օդը, ջերմութիւնը, ցրտութիւնը, ձիւնը, սառնամանիքը, լոյսը, ջուրը և քամիները,

որոնք մեր իշխանութեան սահմանից դուրս են և անհրաժեշտ է դրանց արած ազդեցութեան հետ ծանօթանալ:

7. Օդը: Նատ անդամ լսած կը լինիք, որ մարդիկ ասում են՝ այս օր օդը խոնաւ է կամ չոր է, կամ ի՞նչ քաղցր օդ է և կամ թէ առանց օդի չէ կարող ապրել ոչ մի կենդանի, ոչ մի բոյս թէ ի՞նչ բան է այդ օդը, որին մենք չենք տեսնում մեր աշքի առաջ ու չենք կարողանում շօշափել մեր ձեռքով, այլ միայն զգում ենք, որ նա կայ, այդ մասին ահա գիտնականների ասածը.

Մեր երկիրը, որ գնդակի ձեւ ունի, շրջապատուած է մի անհամ, անհոտ, անտեսանելի գաղի խաւով, որին մթնոլորտ ենք ասում: Այդ մթնոլորտում երկու տեսակ գաղեր կան, մէկը ասում է թթուածին, միւսը ածխածին: Հարիւր քամնից մօտ 21-ը թթուածին է, իսկ 79-ը ածխածին, առանց հաշուելու ջրային գոլորշիները և մի քանի գաղեր, որոնք ցնդուած կան օդի մէջ: Դրեթէ ամբողջ մթնոլորտը կազմող այս երկու գաղերից թթուածինը, եթէ առանձին վեր առնենք, այնպիսի գօրութիւն ունի, որ մենք նրանով շնչելով, շուտ կապրենք և շուտով էլ կը մեռնենք, այն ինչ ածխածինը, նոյնպէս առանձին վերառած, ամենեւին մեզ թոյլ չեր տալ ապրելու,

մենք կը խեղդուեինք նրա մէջ: Բնութիւնը թըթուածինը խառնել է ածխածինի հետ, ինչպէս մենք գինուն ջուր ենք խառնում, որ մեզ չհարթեցնէ: Թէ այդ երկու գաղերը, որոնց օդ անունն ենք տալիս, արդարեւ պէտք են բոյսերին, հարկ չկայ երկար խօսելու, ինչպէս մարդու որ եթէ մի քանի բոպէ շունչ չքաշէ, օդ ներս չառնէ, կը մեռնի իսկոյն, նոյնպէս և բոլոր բոյսերը առանց օդի կը փշանան բոլորովին: Փորձը ցոյց է տուել, որ մի սերմ չէ կարող ծլել, եթէ շատ խորն է ընկնում հողի մէջ և կամ թէ բոլորովին թաղւած է ջրի տակ: Այս, կան սերմեր, որ ջրում աճում են, բայց զրկեցէք այդ ջուրը օդից և նա էլ չի դիմանալ:

8. Զերմութիւն: Ինչպէս առանց օդի նոյնապէս և առանց ջերմութեան կեանք չկայ: Զերմութեան գլխաւոր աղբիւրը երկիրն է ու արեւգակը: Երկիրը մի ընդարձակ շտեմարան է տաքութեան. եթէ փորելով միշտ խորը գնանք, կը տեսնենք որ ամեն 42 արշնից մի աստիճան տաքութիւն կաւելանայ, դրանից էլ հետևցնում են որ երկիրս ներսը, կենտրոնում կը ակ կայ և այդ կը ակի տաքութիւնն է, որ անցնում է մինչեւ երկիրիս երեսը. Բայց մեզ այնքան հետաքրքրական չէ, թէ նա որտեղից է գալիս, արևից՝ թէ երկ-

ըրց, ջրի գոլորշիներից՝ թէ եփ եկող բաներից, մեր գիտնալիքը այս պիտի լինի, որ տաքութիւնն է ծառի մէջի հիւթը ման ածում, նա է, որ կեանք է տալիս ծառին, խոտին, այն սերմին՝ որ պիտի ծլէ, ճիւղեր արմատներ արձակէ, և թէ այն պտշին, որ առանց նրան չէ կարող հասունանալ:

Սակայն այդ կենսատու տաքութիւնը շատ անդամ էլ սպանում, խեղդում է բոյսին, ջէ՞ք լսել, ինչպէս մարդիկ գանդատում են երաշտ տարիներին, երբ այրում են անտառները, չորանում արտերն ու այգիները և յուսահատ գիւղացին մի պատառ անձրեւ է խնդրում երկնքից պապակած երկրի համար։ Այդ ջերմութիւնն է, որ չորացնում է հողը և թոյլչէ տալիս, որ բոյսի արմատները նրանից սնունդ ստանան ու կերակրեն միւս մասերին, գարձեալ այդ ջերմութիւնն է, որից ծառի կամ բոյսի հիւթը կորցնում է իր ջրային մասերը և ինքը թանձրանալով խէժ դառնում, (ինչպէս ծիրանի և գամբուլի ծառերի հետ շատ է պատահում) և էլ չկարողանալով առաջ դնալ մնում է տեղնուտեղը, փակում բոյսի երակների խողովակը, և բոյսը՝ փոխանակ աճելու սկսում է չորանալ։

9 . Ցրտութիւն : Ինչպէս տաքութիւնը ունի իր լաւ ու վատ կողմերը, նոյնպէս և ցըր-

տութիւնը ունի։ Երկու տեսակ ցրտութիւն կայ, չոր ու խոնաւ։ Չոր ցուրտը օդտաքեր է միայն նրանով, որ գարնան սկզբում երբ փչում է, բոյսերի կամ հողի մէջ եղած ջուրը շուտով ցամաքեցնում է, այնինչ լաւ արևին այդ երկար ժամանակի պէտք ունէր, բայց միենոյն ժամանակ արդ չոր ցուրտն է, որ ցրտահարում է նոր ծլած բոյսերին, վչացնում ծառի ծաղիկը, ուշացնում աճեւլութիւնը։ Խոնաւ ցուրտը թէև առանձին մի օգուտ չունի, բայց այնպէս էլ վնասակար չէ, ինչպէս առաջինը։

10 . Չիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ միթնուլորտի մէջ գտնուած ջրային գոլորշիների սառած դրութիւնը։ Նա թէև երբեմն վնաս է տալիս բոյսերին, երբ սաստիկ առատութիւնով թափւում է ու իր ծանրութեան տակ ճղակտոր անում բոյսերին կամ երկար մնալով ուշացնում նրանց աճումը, բայց այնուամենայնիւ նրա տուած օդուտը շատ է, ձիւնն է, որ իբրև վերաբկու ծածկում պաշտպանում է ցրտի երեսից ձմեռնային բոյսերը և նա է, որ իր տակ փակում է երկրից եկած տաքութիւնը, որ անհրաժեշտ է բոյսի համար։

11 . Սառնամանիք, եթէ բոյսերի համար մի հարուած կայ աշխարհիս երեսին, այդ սառնամանիքն (այազը) է, որ հետզհետէ թա-

փանցելով բոյսի ներքին կտղմութիւնը, սառցնում է նրա հիւթը, կտրատում երակները, ճաքճեցնում կեղեն ու ճիւղերը, որից ծառը ու գոյն է առնում կրակից խանձուածի պէս, իսկ դալար բոյսը սկանում է ու փայտանում: Սառնամանիքն է, որ մի երկու օրում խեղզում փչացնում է արտերն ու այգիները, պարտէզներն ու մարգերը և վիզը ծուռ թողում երկրագործին ու այգեպանին:

12. Լոյս: Թէ մարդ, թէ բոյս, թէ անաշուն պէտք ունին լոյսի: Խնչպէս մենք նեղասրտւում ենք, երբ մեր բնակարանը կամ մեր փողոցը մութ ու խաւար է և զուարթանում ենք, երբ մեր շուրջը պարզ ու պայծառ ենք դանում, այն պէս էլ զգում են բոյսերը: Փակիր մի բոյս մութտեղում և նա կը գունատուի ու համը կը փոխէ, մինչդեռ լոյսի մէջ նա աւելի զուարթ տեսը ունէր և աւելի ախորժելի համ:

Թէ արդե՞օք բոյսերը սիրում են լոյս, այդինքներդ ևս կարող էք նկատել. նայեցէք ձեր պատուհաններում դրած ծաղիկներին ձմեռ ժամանակ, երբ դրախ տաքութիւնը չէ ներգործում վրաները և կը տեսնէք նրանց գլխները թեքուած միշտ դէպի արևը. նրանք լոյս են խնդրում և ոչ տաքութիւն: Վերջապէս երկու հողից այն հողն է աւելի պտղաբեր, որի վրայ շատ լոյս է ընկ-

նում ու ստուերի տակ ծածկուած չէ: 13. Զուր: Մենք ասացինք, որ առանց ջերմութեան կեանք չըկայ, մենք կաւելացնենք, որ առանց ջրի ևս առաւել այդ բանը անհնար է: Զուրը՝ ինչ դրութիւնով էլ որ նա լինի, հեղուկ թէ գոլորշի, որ լի է մթնոլորտը և նրանից են առաջ գալիս ամպն ու անձրել, ցողն ու ձիւնը, բոյսերի համար մի կենսատու ուժ է: Զուրն է, որ փափկացնում է հողը և նրա սննդաբար մասերը դիւրամարս շինում արմատների համար, չուրն է, որ զովացնում է, յարութիւն է տալիս երաշտ ամառը գլխները կախած ու թառամած բոյսերին: Թէև նա երբեմն էլ հարուածում է կարկտի ձևով թափուելով կամ թէ հեղեղելով քերում տանումէ հողը, բոյսի արմատները բաց անում, սակայն տուած օդուտները անհամեմատ շատ են: Ո՞վ չգիտէ, որ առանց ջրի փշկարար գոյութեան, աշխարհը կը կորցնէր իր զուարթութիւնը և մի անապատ կը դառնար, մին այն ամայի անապատներից, ուր բացի աւազը ուրիշ ոչինչ չէ երեւում:

14. Քամին ոչ այլ ինչ է, եթէ ոչ օդի տեղափոխութիւնը, որ պատահում է, երբ մի տեղի օդը տաքանալուց թեթևանում, վեր է բարձրանում և մի ուրիշ ցուրտը գալիս է նրա տե-

դը բռնում։ Քամիները լինում են ցուրտ կամ տաք, խոնաւ կամ չոր, նայելով թէ ինչ տեղից է անցկացել մինչև մեզ հասնելը. օրինակ, սարերից անցնելով նա ցրտանում է, ծովերից խոնաւանում, տաք գաշտավայրերից՝ տաքանում։  
Քամիները ևս ունին իրենց լաւ ու վատ կողմերը. նրանք մաքրում են օդը զանազան գարշահոտութիւններից, մի տեղից միւս տեղն են քչում ամպն ու մառախուղը, ամրացնում են բոյսերի ջղերը և օգնում պտղաւորելու, բայց միենոյն ժամանակ կատաղի քամիներն են, որ թափում են ծաղիկն ու պտուղը, ջարդ ու փշուր անում ճիւղերն ու սստերը, տակից պոկում տունկերը, բանում նրանց արմատները, քամիներն են նոյն պէս, որ անպէտք բոյսերի սերմերը բերում լրցնում են արտերն ու պարտէզները, ուր ածելով՝ բաւական նեղութիւն են տալիս երկրագործին։

Գ.

ԱՆՄՇԱԿ ԾԱՌԻ ԶՈՐԴԱՆՑԼԲ.

Սերմի ծլելը, արմ և ծեղ, Ենթագրենք միշուկէ, որ մի սերմ կամ կորիզ քամուց և կամ

մի այլ պատճառից ընկել է բուսական հողի վրայ։ Այդ սերմը կամ կորիզը բաղկացած է հետեւեալ մասերից՝ փեճեկից կամ կճեպից, որ պինդ և ամուր մասն է և իր տակը պահում է նուշը կամ միջուկը, իսկ միջուկի ծայրին է սաղմը կամ ծինը։  
Մի քանի ժամանակից, նայելով թէ ինչ հանգամանքների մէջ է սերմը կամ կորիզը, ծինը կամ սաղմը օդի, լոյսի, ջերմութեան ու խոնաւութեան օգնութիւնով ծլում է, այսինքն ուռչելով նուշի հետ, տրաքեցնում, պատռում է փեճեկը՝ շրջապատող պատեանը և դուրս թողնում արմն ու ծեղը։

Արմը խորասուղում է հողի մէջ և կաղմում է արմատները կամ տակոին, իսկ ծեղը բարձրանում է գէպի վեր և կազմում բռւնը։ Այնտեղը, ուր ծեղն ու արմը միացած են մէկմէկու, առառ է կապ կամ պարանոց, որ միենոյն ժամանակ բաժանում է երկուսի իշխանութեան սահմանները, մէկին ստորերկրեայ, միւսին օդային։

Բուսական կեանքի այս առաջին շրջանում արմն ու ծեղը գեռ այնպէս թոյլեն, որ անկարող են օդից կամ հողից իրանց հարկաւոր սնունդը ստանալ. ահա դրա համար նրանց

շնորհուած էր միջուկը, այն խժային նիւթը, ուրով կերակրում են նրանք, մինչեւ որ ոյժ են ստանում իրանք իրանց գոյութիւնը պահելու:

16. Արմնի և ծեղի փոխադարձ պարտականութիւնը: Թէ արմն ու ծեղը տարբեր տարբեր պաշտօններ ունին և մէկի տէրութիւնը դրսումն է, միւսինը հողի տակ, սակայն մէկը առանց միւսի օգնութեան չէ կարողաճել: Արմը ծառի արմատները, տակուիքը պիտի կաղմէ, իսկ ծիղը՝ շիւեր ու ստեր ձգելով նրա բունը և ծիւղերը: Եթէ ծշմարիտ է այս, որ առանց արմատների օգնութեան չէ կարելի ծիւղերի ձևանալը, նոյնքան ծշմարիտ է, որ ամեն մի ծիւղի ու սատի աճելուն հետ աճում են համեմատաբար և նրա արմատները. փոխադարձ օգնութիւնը ակներե. է. ծիւղերի աւելանալով՝ աւելանում են արմատները, ինչպէս և արմատների բանելով՝ բանում են ծիւղերը:

17. Արմատների ձեանալը: Արմը երկու պաշտօն ունի կատարելու. մին՝ որ գետնից ամուր կապած պիտի պահէ ծառը և երկրորդ՝ նրան պիտի հասցնէ իր անհրաժեշտ կերակուրը: Այս երկու պաշտօնի համար էլ նա կարիք ունի իր տէրութիւնը ընդարձակելու, ճանապարհները հարթելու. ուստի նա սփռում է իր արմատները

ամեն կողմ ամեն ուղղութիւնով, որոնք անդադար բազմանում են թուով, հաստանում են ու մեծանում: Այդ արմատները ինչ ձեռով, ինչ ուղղութիւնով էլ որ ընկած լինին, այնու ամենայնիւ կազմում են ստորերկրեայ ծունկեր (տակախներ), որոնց վրայ գտնուում են անթիւ մազաթելեր: Այդ թելիկների ամէն մէկի ծայրին կայ մի կընծիթ—մի բերան սպնդածն, որով ծծում, իրան է քաշում հողի մննդարար մասերը և հասցնում արմատներին, իսկ գրանք ծեղին կամ բունին:

Այդ բազմաթելերն են ծառի ստորերկրեայ մասի մննդեան դործարանները, իսկ հաստարմատները կամ ծունկերը միայն միջնորդ են նըրանց բերածը ժաղովելու, ամբարելու և ուղարկելու ուր որ հարկն է: Ուրիշ խօսքով՝ մազաթելերը նման են այն ազբիւրներին, որոնք այստեղից այնտեղից գալով՝ հաւաքում են աւազանների, այն է արմատների մէջ և գարձեալ այդտեղից փռուում տարածւում ուրիշ կողմեր:

18. Մեղի կամ բունի կազմուիլը: Այնինչ արմը մի կողմից արմատներ է ձգում գետնում, ծեղը կամ բունն էլ իր կողմից աճում բարձրանում է: Միջուկից դուրս գալուց յետոյ տեսնում ենք, որ նրա գրսի ծայրին մի փայլուն կէտգոյացաւ, որին հասարակօրէն աչք անունն են

աալիս և ծառի աճելութեան մէջ նշանաւոր գեր  
է կատարում:

Աչքը դոյանում է, երբ ծառի հեղանիթը  
առաջին անգամ հաւաքուելով՝ ուռցնում է նրան  
և դէպի յառաջ հրում: Առաջին տարին նամիայն  
կազմակերպում է, երկրորդ տարին ծեղը եր-  
կարելու համար նա բացւում է, չօշ կամ շիւ է  
ձգում, և երբ շօշը մի աստիճան երկարանում  
կանգնում է, տեսնում ենք նրա ծայրին մի նոր  
աչք էլ երևաց, որ երկրորդ տարին դարձեալ  
բացւում շօշ է ձգում: Այսպէս ամեն տարի շօշը  
երկարանալով՝ միշտ առաջ ու առաջ է դնում  
ծեղի կամ բունի աճումը, մինչև որ ծառը հաս-  
նում է իր ընական բարձրութեան:

19. Ծառի ճիւղ աւորուիլը: Մինչդեռ  
ծեղը, որ ծառի բունը—մարմինը պիտի կազմէ,  
ուղիղ բարձրանում դէպի վեր, իր զարդանալուն  
համբնթաց գնում է և ճիւղաւորութիւնը:

Այնմիջոցին երբ ծեղի վերջաւորիչ աչքը շիւ  
է ձգում բունը երկարելու համար, միենոյն ժա-  
մանակ նրա կողքերից կողմնական աչքեր էլ են  
գուրս գալիս, որոնցից իւրաքանչիւրը բացուելով՝  
միշտ շօշ է ձգում: Այս նոր շօշերը նոյն կարգով,  
այսինքն աչքեր ձգելով, աճում երկարանում են և  
իրանք էլ ունենում են կողքերից կողմնական աչ-

քեր, ինչպէս և ծեղի վրայի: Այսինքն մասնակից ա-  
հա ասում ենք ծառը ոստեր, շիւեր է ձգել. իսկ  
ոստը մի աստիճան մեծանալով՝ դառնում է ճիւղ,  
որի վրայ կարելի է տեսնել այդ ամենը զանա-  
զան ուղղութիւնով և մեծութիւնով:

20. Բունի մաս ու եր ը: Մի ծառի կազմակեր-  
պութիւնը կատարեալ է, երբ նրա բունն ու ճիւ-  
ղերը ձեւացել են արդէն: Բունը մի է. նա ունի  
ծուծ, բնափայտ, ընդկեցեւանք և կեղեւ:

21. Ծուծը՝ որ ծառի ամենահին, այսինքն  
առաջին անգամ կազմուած շերտն է, գտնւում է  
բունի կեղրունում. նա ծառի սիրտն է: Քանի որ  
տունկը մատաղ է. ծուծը կակուղ ու ծակոտկէն է. օ-  
քանի ծառը պառաւում է, այնքան էլ նա ամ-  
բանում, պնդանում է և միանում բնափայտի հետ,  
այնպէս որ այլևս գժոււար է նրանից որոշելը.  
բայց նա պահում է իր գոյութիւնը շիւերի ու  
ճիւղերի մէջ և այնքան մեծ տեղ է բռնում, որ-  
չափ նրանք մատաղ ու թարմեն:

22. Բնափայտը: Երբ ծուծը ամրանալով  
կորցնում է իր յատուկ տեսքը, կազմում է բնա-  
փայտը, այն է՝ բունի երկրորդ շերտը, որ աւելի  
պինդ ու մուգ մասն է: Ծուծն ու բնափայտը  
ծառայում են բունի հաստատութեան և գրեթէ  
գործ չունին նրա աճելութեան մէջ և այնքան

նշանաւոր չեն, ինչպէս ընդկեղեանքը և կեղեց:

23. Ընդկեղեանքը՝ որ բնափայտի ու կեղեի մէջտեղն է բռնում, ծառի անհրաժեշտ գործարանն է: Եթէ ընդկեղեանքը սաստիկ վընասուած է, ծառը այլքս չէ կարող ապրել: Նա կազմուած է մի քանի շարք միմեանց վրայ դասաւորուած բարակ տռէջքների մի շեքտից, որի մէջ պտառում է ծառհիւթը:

24. Կեղեր՝ որ բռնի չորրորդ շերտն է կաղմում, ընդկեղեանքի պէս բաղկացած է մի խիստ միմեանց վրայ ընկած հիւսուածքից, որի ներքին մասը անթիւ ծակոտիներ ունի սոսնձանման հիւթով լիքը, միջինը նոյնպէս հիւթալից է, մանաւանդ ծառի ջուր ընկած միջոցին, իսկ արտաքին մասը՝ մաշկը, նայելով ծառի հասակին՝ բարակ կամ հաստ է, թարմ կամ չոր է:

25. Տերեկի պա շտօնը: Բայց ծառի աճումը անկարելի է առանց տերեկի, որ նրա մէջ երեք նշանաւոր պաշտօն ունի. Նա մշակում է ծառի հիւթը, ինչպէս կենդանիների մօտ սիրալ արիւնը. Նա կատարում է թոքերի պաշտօնը շընչառութեան գործողութիւնով և երրորդ՝ ինչպէս ծծմալը կերակրում է իր թեկի տակ բացուող աչքին:

26. Տերեկի մասերը: Տերեկ բաղկացած

է. ա) Երեսի մասից՝ որ նուրբ է, դուրսն է նայում, միշտ մուգ կամ բաց կանաչ գոյն ունի և մնում է մինչեւ աշունը, երբ կորցնում է իր բընական գոյնը. բ) աստառից, որ դէպի ցած է նայում և ամբողջ տարածութեան վրայ ձգուածեն բազմաթիւ խողովակներ ու նեարդեր, որոնց միջավայրում նկատելի են բծիճանման ցանցերը լի մի հեղանիւթով, որին պարանշիմ են ասում, և վերջապէս կոթից՝ որ միայնում է տերեկ ծառին:

27. Մառհիւթի մշակուիլը: Տերեկի բարձրահայեաց մասը ընդհանրապէս կոկ ու երբեմն փայլուն է, ներքենը ընդհակառակը խորդու բորտ, նեարդերով ու խաւով ծածկուած: Այս երկու երեսներին փուուած են անթիւ ծակոտիներ, որոնց ստոմատ են ասում, և գրանք կատարում են ծառի սննդեան համար այն՝ ինչ որ արմատների մազաթելերը իրանց կնճիթով: Տերեկ այդ ծակոտիներով մթնոլորտից ծծում է օդ, դաղեր և ջրային դոլորչիներ և միկնոյն ժամանակ կոթի միջոցով է ընդունում արմատի ուղարկածհեղանիւթը: Ահա այդ միջոցին նրա մէջ կատարում է մի զարմանալի դարձողութիւն. ծառի հիւթի ջրային և անօդուտ մասերը արտաշնչում են դոլորշիանալով, իսկ մնացած մասը

Ժակուերով, փոխակերպում է ծառհիւթի (կամքիումի), որ ամենակենսական տարրն է ծառի, և տերևներից կրկն վերադառնում է ընդկեղեանքի ու կեղիի խողովակներով և բճիճներով դէպի արմատները, ճանապարհին թողնելով իր մի մասը, որ թանձրանալով ու պնդանալով մի նոր շերտ է աւելացնում բնափայտին:

---

### ՊՏՂԱԲԵՐՈՒԹԵԱՆ ԴՈՐԾԱՐԱՆՆԵՐԸ ԵՒ ԲԵՂՄՆԱՀՈՐՈՒԹԻՒՆ.

Աչքը և կոկոնը: Աչքը ծառի աճելութեան գործարանն է, նա կազմում է բունը, ճիշդերն ու սոսերը, այսինքն ծառի փայտեղէն կամ ամուր մասը: Պատուղ արտադրող գործարանը կոկոնն է կամ կոճակը:

Աչքի ու կոկոնի մէջ շատ տարբերութիւններ կան. մենք կը յիշենք միայն այս երկուսը: Աչքից միշտ առաջանում է փայտեղէն մասը, իսկ կոկոնից ծաղիկը. երբէք մի աչք ծաղիկ չի տալ, ինչպէս մի կոկոն չիւ: Երկրորդ՝ արտաքին աեսքով ևս հեշտ

է նրանց որոշել. կոկոնը աւելի մեծ է, ուռած, կոլոր և սղմելուց կակուղ է, այն ինչ աչքը կոնածե, ամուր և ծածկուած փոքրիկ կոշտ փաթեթներով: Սկզբներում վարժութիւն է հարկաւոր դրանց ճանաչելու. մեծանալուց որոշակի ջոկլում են մէկմէկուց:

29. Ծաղիկը և նրա մասերը: Երբ ծառը իր կատարեալ աճելութեան է հասած, շիւի վերջաւորիչ կամ կողմնական տերևները փոխարկում են մի նոր գործարանի, այն է՝ ծաղիկի, որ պտղի նախագուշակն է:

Մի ծաղիկ կատարեալ է, երբ նրա վրայ նկատում ենք հետեւեալ չորս մասերը. սանդհար, առէջքներ, պատկան և փաթեթ:

30. Սանդհարը ծաղկի կետրոնական, միենոյն ժամանակ նրա իգական գործարանն է. իր անունը առաջ է եկած սանդի թակի (կոթի) հետմանութիւն ունենալուց:

Սանդհարի գագաթին է կնիքը կամ սպին, միջի մասը, որ մի դատարկ խողովակ է, ասւում է զոխ, իսկ նատուածքը, այն է՝ ներքեկի մասը, պատուանդան:

Սանդհարը զոխի մէջ փակած ունի ձուարանը կամ պտղատունը, որ կպած է պատուանդանին:

Զուարանը բաժանուում է մի բանի լսորշերի, որոնց մէջն են ձուիկները կամ սերմերը, որոնք բեղմնաւորուելով պտուղ պիտի տան:

31. Առէ չքները՝ որ ծաղկիարական գործարաններն են, պատում են սանդհարին. սրանք բարակ նրբաթելեր են, որոնց իւրաքանչիւրը իր վերիծայրին ունի մի պարկիկ, որին փոշիանօթ են ասում. իսկ փոշիանօթները լի են փոխինսդով, այն է՝ բեղմնաւորիչ փոշիով:

32. Պսակը կազմում է երրորդ շրջանը. սա բաղկացած է ծաղկաթերթերից: Ծաղկի մէջ ամենից շուտ աշքի ընկնողը, գունաւոր ու հոտաւէտ մասը, պսակն է, որ բացի իւր հաճելի տեսքը, կատարում է մի նշանաւոր պաշտօն. նա սանդհարի ու առէջների խնամակալն է և պահպանում է նրանց արտաքին հարւածներից:

33. Փաթեթը՝ որ ծաղկի արտաքին անդամն է, կատարում է նոյն պաշտօնը, ինչ որ պսակը, այսինքն իբրև փաթեթ պահպանումէ առաջիններին:

34. Բեղմնաւորութիւնը: Ծաղիկը բեղմնաւորուելու, այն է՝ պտուղ տալու համար անհրաժեշտ է, որ երկու բեղմնաւորիչ գործարանները միմեանց հետ հաղորդակցութիւն ունենան. այդինում է առէջների փոշիանօթի և սանդհարի ձուարանի միջոցով:

Երբ ծաղկիկը բաւականաչափ հասել է, փոշիանօթները ճեղքւում են և փոխինդը աղատուելով՝ թափուում է սանդհարի կնիքի կամ սպիտի վրայ. այդտեղ սպիտի արձակած խոնաւութեան միջոցով փոշին բայցայւումէ և իշխում զոխով մինչև ձուարանը, այդտեղից էլ անցնում է ձուիկներին ու թաթախում նրանց: Երբ միանդամ տեղի ունեցաւ այդ թաթախուիլը, արդէն ծաղկի բեղմնաւորուիլը վերջացած է:

Բայց պատահում է, որ ծաղկի բեղմնաւորիչ գործարաններից մին պակաս է, այդ ժամանակ բեղմնաւորիլը կատարում է բամու կամ միջատների միջոցով, որ մի ծաղկի փոշին բերում թափում են միւսի կնիքի վրայ: Այսպիսով առաջանում են պտուղների այլ և այլ տեսակները:

35. Պտղի ձևանալը: Մի անդամ երբ ծաղիկը բեղմնաւորուել է, նրա կազմակերպող մասերը՝ փաթեթը, պսակն ու առէջները այլ կա անօգուտ են, ուստի թառամում ընկնումեն, իսկ ձուարանը, որի մէջ են բեղմնաւորուած սերմերը, մեծանում է և կամաց-կամաց պտղի կերպարանք առնում. ձուերը կամ սերմերը պահպանում են իրանց միակերպութիւնը մի աստիճան մեծանալուց յետոյ:

36. Պտղի մասերը: Պտուղը կիսելով մենք

նըկատում ենք նրա վրայ հետևեալ մասերը, շըր-  
ջապատեանը՝ որ արտաքին մաշկն է, միջնա-  
պատեանը՝ պտղի միսը և ներքնապատեանը, որ  
պինդ ու ամուր մասն է և իր տակը պահում է  
նուշը կամ միջուկը:

Առհասարակ պտղի մասերը գանազան են  
իրանց կազմութիւնով և մենք երբեմն նախա-  
պատւում ենք նրանց միջնապատեանը (կեռասը,  
գեղձը, խնձորը) և երբեմն նրանց միջուկը (նու-  
շը, շագանակը, տիկը):

37. Անմշակ ծառի պտուղը և նրա  
վախճանը: Անմշակ ծառի պտուղը այն չէ, ինչ  
որ մշակուածինը. Եթէ ծառը ինձորենի կամ  
տանձենի է, նրա պտղին մենք տալիս ենք վայ-  
րի խնձոր (տղզան, քոլախնձոր) կամ վայրի տանձ,  
(պանտա, քոլատանձ) անունը, որ յայտնի են  
իրանց փոքրութիւնով ու տտիպ համով: Այդ  
անխնամ ծառը տարիների ընթացքում աճելով,  
հետզհետէ կորցնում է իր զուարթութիւնը, տը-  
գեղանում է, ճախերով ծածկում, հեղեղը, մի-  
ջատները, մկները բանում են նրա արմաները,  
փայտովիները քչփորում են նրա կեղեանքը, թըր-  
թուռը խժում է տերերը, ժանդը—բորբոսը  
պատում է նրան և խօթացած ծառը՝ այլևս չկա-  
րողանալով իր ուժերը նորոգել արդէն մնունդը

Հատած հողի մէջ կտըրուում է պտուղ տալուց,  
չորանում, փտում և մի օր գետնին տապալուում:  
Թէև ներքին կազմութիւնով անմշակ ծառը  
զանազանութիւն չունի մշակուած ծառից, սա-  
կայն տարբերութիւնը մեծ է նրանց պը-  
տուղների մէջ: Որչափ մէկին ինամելով աւելի  
քնքուշ ու համեղ պտուղ ենք ստանում, միւսին  
անխնամ թողնելով՝ անհամ ու անախորժ: Ուստի  
համկանալի է, որ մի վայրենի ծառ, եթէ ուղում  
ենք, որ մեղ ծառայէ, պիտի նրան կըթենք, ինա-  
մանք: Ծառի կըթութիւնը, ինչպէս և մարդկանցը,  
կարելի է միայն կըթուած հասարակութեան,  
կըթուած շրջանի մէջ, և ինչքան մատաղ հա-  
սակի մէջ սկսուի այդ կըթութիւնը, այնքան ա-  
ւելի շուտ նա կատարեալ կը լինի: Թէ ինչպէս  
պիտի կատարուի այդ, մենք կը խօսենք հետե-  
ալ բաժնում:

ՄՇԱԿՈՒՄԾ ԾԱՌ

Ե

ԱՅԳԵՏԵՂԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ.

1. Մի ծառ մշակելու կամ կրթելու համար առաջին հոգաց պիտի լինի այգետեղի ընտրութիւնը:

Այդու գիրքը և գետնի կազմութիւնը մեծ նշանակութիւն ունի ծառի կրթութեան վերաբերմամբ, նա մի կողմից պիտի ունենայ բաւականաչափ օդ, լոյս, արև, ջուր, տաքութիւն, պատսպարան, և միւս կողմից՝ ընտիր և պարարտ հող:

Մի այգի, թէև արեկի տակ, բայց կարող է օդ չունենալ՝ երբ բնական թէ արուեստական բարձր պատերի մէջ խեղդուած է, սոյնպէս օդ ունենալուց՝ կարող է արև չունենալ՝ երբ այգին զառիվայր տեղ է և այդ գէպի հիւսիս է նայում: Լոյսը ևս այգու գիրքին նայելով՝ մի մասի վրայ աւելի կարող է ընկնել, այնինչ միւս մասը ըստ ւերի մէջ է շարունակ. ջերմութիւնը, որ չպիտի

խառնել արեկի հետ, ունի և իր նպաստաւոր և աննպաստ կողմերը. մի այգի՝ չնայելով որ արեկ տակ է գտնւում, այնու ամենայնիւ եթէ ցուրտ քամու հոսանքի առաջ է, չէ կարող ցանկալի տաքութիւնը ստանալ:

Իսկ գետնի վերաբերմամբ այդին ծառերի պահանջման համեմատ հող ունենալուց զատ ոչ շատ չորութեան ենթակալ պիտի լինի, որ ծառի արմատները չորանան և ոչ սաստիկ խոնաւութեան, որ փտեցնեն նրան. բայց միայն այս չէ բոլորը. կան ծառեր, որոնց պատուղը լաւ է հասնում շուք – ստուերոտ տեղում, քան չափազանց լուսի և արեկի տակ. մի քանիսը սիրումեն հիւսիսահայեաց գիրքը, մեծ մասը արեկելահայեաց կան այնպիսիներն էլ որ առանց պատսպարանի շեն դիմանում և գերագասում են պատերի մօտ լինել, փռուիլ, տարածուիլ նրա երեսին: Ահա այսպիսի հանգամանքներում հմտութիւն է հարկաւոր կարելի եղածին չափ յարմարաւոր տեղ ընտրել

2. Այդու գիրքը: Մի գետին երբ ցանկալի հողը չունի, փողի ուժով դարձեալ կարելի է մի ճար անել՝ ուղղել, բայց երբ նրա գիրքը անյարմարէ, այդ ոչ մի փողով անհնարէ փոխել, ուստի հասկանալի է գիրքի մեծ նշանակութիւնը:

Այդետեղը միշտ հարթ ու տափարակ տեղ  
պիտի լինի. զառիվայրերի պակասութիւնը ոչ թէ  
նրա մէջն, է որ յորդ անձրեները հողը քերելով,  
ներքե տանելով տունկի արմատները կարող են  
բացուել, այլ որ երբ նա նայում է գէպի հիւսիս  
միշտ ենթակայ է ցրտութեան, հարաւ նայողը՝  
այրուելու, խանձուելու, արևմուտաք՝ խոնաւու-  
թեան, իսկ արելք՝ չորսթեան:

Անյարմար են նոյնպէս թմբերի գագաթը և  
բարձրաւանդակ տեղերը, ուր քամին շարունակ  
փշում է, թափում ծառի ծաղիկը և հեռու քը-  
շում բեղմաւորիչ փոշին. անյարմար է վերջա-  
պէս և խոր ու ձոր տեղերը, ուր մառախուղը  
նստելով՝ արգելում է պտղաբերութիւնը:

3. Գետնի կազմութիւնը: Թէև մի-  
ենոյն գետնի վրայ մենք շատ անգամ տեսնում  
ենք, որ աճում են բազմաթիւ պտղատու ծառեր  
բայց գրանցից ամէն մէկը ունի իր սիրած հողը,  
որ աւելի նպաստում է թէ նրա աճելութեան և  
թէ պտղաբերութեան, ուստի վատ չի լինի աշ-  
քի առաջ ունենալ և այդ հանգամանքը:

Խաղողը և գեղձը սիրում են աւելի խճա-  
խառն կաւը, կրային և աւաղային հողերը. տան-  
ձենին և նոռոը—կաւ-աւաղային և կաւ-կրային  
հարուստ հողը. ծիրանին, կեռասին, թթին, դա-

մոնին պարարտ սեւ հողը քիչ կաւախառն. ըն-  
կուղենին ու տիփիլը (տկողինը) կրային—քրէճոտ  
բայց խոր հողը. խնձորենին գրեթէ յարմար է  
բոլոր հողերին, բայց աւելի սիրում է աւաղա-  
կաւային և քրէճոտ խոնաւ հողը, ինչպէս և  
թղենին ու սերկելին:

4. Այդու շրջապատը: Այդին շրջափակ-  
ւած պիտի լինի շէնքով, պարապով, հողէ կամ  
քարէ պատով և կամ թէ չէ չափարով, որպէսզի  
մի կողմից իբրև պատոպարան ծառայէ մատաղ  
տունկերին սաստիկ քամիների կամ ցրակ ժամա-  
նակ և միւս կողմից արգելք լինի անասուններին  
զբօսավայր շինելու այգին, և վերջապէս երկու-  
տանիների չար աչքից ազատ պահէ հասած պը-  
տուղները:

Այդու շրջապատի բարձրութիւնը 3—4 ար-  
շին բարձրութիւն պիտի լինի. հարաւային կող-  
մից պատի փոխարէն լաւ է սղնի, մասուրի կամ  
այլ ցախոտ թփերից կենդանի չափար քաշել,  
որ ազատ ճանապարհ լինի այգու ներսը տաք  
օդ խաղալու և չորս պատերի մէջ հաւաքուած  
քամիներին գուրս գալու աեղ: Այդպիսի կենդա-  
նի չափարը մօտ երկու արշին բարձրութիւնով  
խիտ տնկւած և լաւ խուզած, յարգարած մի  
շքեղութիւն ևս կըտայ այգուն:

Զ.

## ՀՈՂԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ

Նատ քիչ է պատահում, որ հողը բնութիւնից պատրաստ լինի և ամեն բանով օժտուած մեր ցանկացած նպատակին ծառայեցնելու. ուստի մենք շատ անդամ ստիպուած ենք նրան ուղղել, պատրաստել. այդ լինում է երկու կերպ՝ համեմելով և պարարտացնելով:

5. Համեմելու նպատակը՝ Հողը համեմելու նպատակն է նրա երեք գլխաւոր տարրերի, այսինքն կաւի, կրի և աւազի մէջ հաւասարակշռութիւն պահպանել, որպէսզի օդը, ջուրը, ջերմութիւնը և պարարտացուցիչ նիւթերը կարողանան հեշտութիւնով հասնել ծառին:

Համեմել կարելի է իրան այգու հողով, երբ փորելուց խառնվում են վերի և վարի տարբեր շերտերը, և եթէ այդ յատկութիւնը չունի ածովի հողով:

6. Համեմելու եղանակը՝ Երբ մի հողի մէջ կաւը չափեց աւելի է, նրան պիտի հա-

մեմել (խառնուրդ անել) աւազով և լուսնահոգով, որ նրան փիրուն շինէ, եթէ այդ կաւը շատ թաց է, ջուրը պիտի ցամաքեցնել ստորերակեայ անցքերով կամ կրահողով և աւազով, եթէ սաստիկ ջիլէ ու ծանր՝ հողի մի մասը ժանդաների և խոտերի միջոցով պիտի այրել թիւթայ շինել:

Կը ային հողը պիտի համեմել կաւով, աւազով և սեռցքով:

Աւազայինը՝ կաւով, քանդուած պատի ծեփանքով, ճանապարհների փոշիով:

Խառնուրդը հողի մէջ ամեն մի տեսակից պիտի կազմէ մօտ երլորդ մասը ամբողջի:

7. Բացի այդ միջոցները կան և այնպիսի իրեր, որ իրանց յատկութիւնով կարող են թէ համեմել և թէ պարարտացնել միանդամայն. սրանք են լէ պանըը և ծովծիդիդը:

Լէպանքը այն խմորի պէս ձեռքում շաղախւող պարարտ հողն է, որ մեզանում թուրքի կանայքը բանեցնում են իբրև սապոն լուացքի ժամանակ. նա դժոնում է թէ գետնի երեսին և թէ շատ խորը զանազան գոյներով. Երբեմն նա պինդ է քոէճի տեսքով, որ ձեռքում շիելուց հեշտութիւնով փշրւում է, թիթայ դառնում լէպանքը լաւ է բանեցնել աւազային հողում:

Մովզիդը, որ ծովի գուրս ձգած խեցեմորթների պատեանների վշրտանքն է մանր աւաղի ձևով և աղերի հետ խառն, կարող է օդտակար լինել աւազային հողում:

8. Պարարտացնելու նպատակը: Ծառը, ինչպէս և միւս բոյսերը, աճելու համար բուսական հողի մէջ գտնում են իրանց հարկաւոր մննդարար նիւթերը. բայց այդ հողը տարիների ընթացքում մաշւում է, այսինքն իր սըննդարար նիւթերը շարունակ կորցնելով այլես անկարող է լինում բոյսը զօրացնելու ինչպէս հարկն է, ահա այդտեղ արհեստական միջոցով հողի պարարտացնելը մեծ ժառայութիւն է անում, նա վերանորոգւում, ոյժ է առնում և առաջւանից աւելի պտղաբեր շինում ծառը:

Պարարտացնող միջոցներից գիխաւորները են կենդանիների աղբը, բուսական մնացորդները և փորը:

9. Կենդանիների աղբ անունով հասկանում ենք, ախոռի, գոմխտան, ոչխարանոցի, խողանոցի, հաւտատան և արտաքնոցի աղբը:

Բուսական մնացորդները են՝ թափուած տերևները, չոր ու փտած խոտերը ու ժանգալները, ճախերն ու փայտեղին վշրտանքները և այն ամեն բան, որ առաջանում են բոյսերից:

Փողը կազմում են տան և գուան բողոր աւելուածքը, խոհանոցի շպրտւածքը, լուացքաշուարը, մոխիրը, արհեստանոցների, գողծարանների և խանութների դուրս ձգած բողոր կեղտոտութիւնները, որոնց մէջ մտնում են հազար ու մի տեսակ նիւթեր:

Այս երեք կարգ պարարտացնող նիւթերից ոմանք գլխաւորապէս ծառայում են ծառի փայտեղէն մասը աճեցնելու—ինչպէս են կենդանիների աղբը, ոսկրների վշրտանքը, հացաբոյսերի կամ այլ սերմերի թեփանքը, բրդեղէն շորերի ծննդանքը, տան փսորը, և ոմանք պտղաբերութիւնը շատացնելու—ինչպէս են՝ խաղողի թեփակը, փայտի մոխիրը և բոլոր բուսական մնացորդները. ուստի և ծառի հասակին և կազմութեան նայած՝ պիտի գործադրել երբեմն մէկը և երբեմն մէկէլը:

10. Պարարտացնելու եղան ակը միքանի կերպ է. կարելի է կամ այդու ամբողջ տարածութեան վրայ փռել աղբը և ապա բահերով կամ արօրօվ հերկելով՝ հողին խառնել. աւելի խնայողաբար գործ ածած լինելու համար լաւ է փորել ծառի շուրջը և մի որոշ քանակութիւնով աղբ լցնել. կարելի է վերջապէս հողի կամ ջրի հետ խառնելով՝ փռել այդու մէջ:

Այս պարարտացնող աղբերը, մանաւանդ կենդանիներինը, գործադրելուց առաջ պիտի մի տեղ կուտակած լինի, որ փոխի, այրուի, ապաթէ ոչ եթէ տաք-տաք և անպատճաստ ծառի տակը ածենք, այնտեղ փոխելով՝ կալրուի և կայրէ ծառի արմատները:

Պարարտացնելու յարմար ժամանակը աշունքն է, որ ձմեռուայ ընթացքում աղբը լուծւելով, քայլայուելով՝ գարնանը ծառի ջուրը ընկած միջոցին առատ սնունդ ունենայ նրան տալու:

Այժմ, որ շատուքիչ հասկացողութիւն ունինք հողը համեմելու և պարարտացնելու վրայ, տեսնենք ինչպէս պիտի կատարուի ծառերի տնկելը:

Է.

### ՊՏՂԱՏՈՒ ԾԱՌԵՐԻ ՏՆԿԵԼԸ

11. Հողի պատրաստութիւնը: Ծառը տնկելուց առաջ պիտի լաւ պատրաստել իր տակի հողը, որ մատաղ տունկը այդտեղ տեղափոխելուց՝ առատ սնունդ և պարարտ գետին գըտ-

նելով շուտով վերականգնէ իր առողջութիւնը, որ շատ ու քիչ խանդարւած է լինում մայր հողից հեռացնելու ժամանակ. ուստի նրանց տընկելու փոսերը հետեւալ յարմարութիւնները պիտի ներկայացնեն. առաջին նրանք լինին թէ քառանկիւնի, լայն պիտի լինեն, որ ամէն կողմ ազատ ճանապարհ տան արմատներին. երկրորդ՝ աւելի լայն քան թէ խոր, ինչու որ արմատները կարիք ունին լուսի և նրանք աւելի հորիզոնական դիրք են առնում քան ուղղահայեց, և երրորդ՝ հողը պարարտացրած համեմած լինի:

12. Փոսերի լայնութիւնը կախուած է գետնից, եթէ նա չոր է և թոյլ, պէտք է  $2\frac{1}{2}$  արշին մեծութիւն ունենայ, եթէ պարարտ և փիւրուն  $1\frac{1}{2}$ , եթէ հողը չորութեան ենթակայ է, շատ խոր պիտի լինի, որ արմատները հարկաւոր խոնաւութիւնը ունենան, եթէ խոնաւ՝ ընդհակառակը երես, որ խոնաւութիւնը արգելք չկինի օդի ներս թափանցելուն: Զոր գետնի համար պակասը մի արշին խորութիւն է հարկաւոր, իսկ թացի համար՝ մօտ կէս արշին:

Փոսերը գոնէ մի ամիս առաջ կտրած և դուրս տուած հողը մօտը կիտած պիտի լինի, որ օդի տակ մնալով աւելի զօրանայ և փխրուն գառնայ և ոչ թէ հէնց տնկելու օրը փորել:

Բացի այդ եթէ հողը պիտի համեմուի կամ  
պարաբացնուի, առաջուց այդ նիւթերը ամեն  
փոսի մօտ պիտի գնել և թողնել մինչև ծառ  
տնկելու օրը:

13. Ծառ տնկելու յարմար ժամանակը աշունքն է, երբ ծառհիթը վերադառնում է  
գեղի արմատները և տերեները կամաց-կամաց  
սկսում են թափուել: Չմեռանից առաջ տնկածը  
այն առաւելութիւնն ունի, որ ծառի արմատները  
զօրանում են ձմեռայ ընթացքում և առաջի-  
կայ տարին կարող է նա մի քանի պտուղ տալ.  
միայն երբ հողը ջիլ է ու խոնաւ աշնան տնկածի  
արմատները ձմեռը փտում են, ուստի այդ դեպ-  
քում պիտի թողնել գարնան մեղմ օրերին, ինչ-  
պէս և այն դեպքում, երբ մի տեղ ձմեռը սառ-  
տիկ ցրտեր ու սառնամանիք է լինում:

Ծառի ընտրութիւնը: Կովկասում ուր  
կլիման և հողը ներում է, աճում են բազմաթիւ  
պտղատու ծառեր, որոնց հետ հեշտ ծանօթա-  
նալու համար չորս կարգի կը բաժանենք.

ա. Ծառեր, որոնց պտուղը սերմ ունի, ինչ-  
պէս են՝ տանձը, ինձորը, սերկեիլը:

բ. Ծառեր. որոնք կորիզ կամ կոճ՝ գեղձը,  
ծիրանը, գամոնը, կեռասը:

գ. Ողկոյզ կամ ճիթ ունեցողները—խաղողը:

դ. Խառն ծառեր՝ թթենին, թզենին, նըռ-  
նին, որոնց պտուղը չունի վերոյիշեալների որոշ  
յատկութիւնը:

Այս չորս կարգ ծառերից ամէն մէկը բազ-  
մաթիւ տեսակներ ունի, որոնք որոշում են  
իրանց մեծութիւնով, ձեռվ, գոյնով, համով, ա-  
ռատութիւնով, հասանութեան ժամանակով և  
ծառի կազմութիւնով. ուստի այդի տնկողը դը-  
րանցից իւ ընտրութիւնը պիտի կազմէ, աչքից  
չձգելով և մայրհողը և ծառի մշակութեան պայ-  
մանները:

Մի ծառ տնկելուց՝ շատերը կամ վայրի ծառ են  
փոխադրում այդին և նրա վրայ իրանց ուղած  
տեսակը պատւաստում և կամ թէ չէ տնկանո-  
ցում պատւաստած լաւ բռնածը հանում, բե-  
րում են տնկում: Այս երկու ձևերն էլ իրանց  
լաւ կողմերն ունին և, հանգամանքներին նա-  
յած, կարելի է երբեմն մէկը և երբեմն մէկելը  
նախապատւել: Նոր տնկելու ծառը երկու տարին  
լաւ է, որ լրացրած լինի և ոչ շատ ծեր կամ  
մատադ: Եթէ պատւաստած ծառ ենք առնում,  
աւելի լաւ է այն ընարել, որի պատւաստը բռւ-  
նի վերևիցն է, ինչու որ վայրի ծառի բռնը աւ-  
ելի դիմացկուն է ցրտին, տաքին, քամիներին և  
թէ կենդանիներին, քան թէ շահինը, որ ներ-

քեից պատւաստած լինելով՝ հաստանալու համար գեռ տարիների պէտք ունի:

15. Ծառի հանելը: Ծառը հանելու համար երկու զգուշութիւններ են հարկաւոր. առաջին՝ յաջող եղանակ ընտրել, ինչու որ թէ շուդերին և թէ ցրտերին ծառի արմատները և մազաթելերը փշանում են, մանաւանդ եթէ երկար ժամանակ ճանապարհորդութիւն են անում, և երկրորդ՝ որչափ կարելի է, աշխատել, որ արմատները և եթէ ճիւղերը քիչ վնասուեն: Տնկելուց առաջ վիրաւորւած տեղերից վերը պիտի կտրել հեռացնել, չոր ճիւղերը տալ, և եթէ նկատելի է որ ճղները չափազանց են արմատների համեմատութիւնով՝ նրանցից կտրատել ու հաւասարակշութիւն պահպանել նրանց մէջ:

Պէտք է թողնել այն բարբարոս սովորութիւնը, որ նոր տնկելու ծառը կնտում, քաչալացնում են, սրա վնասը ակներև է, եթէ մի բոպէ յիշենք, որ տերեներն են ծառերի մշակողը և արմատներին օգնողը. բայցի այդ ծառի գլուխը կտրելով, նրան ենթակայ ենք շինում օդի ներդործութեան, որից ճեղքում է նա, անձրես մտնում և հետզհետէ փտեցնում բունը:

16. Ծառերի գասաւորելը և տնկելը: Ծառերը նայելով իրանց բնութեան, այս

պէս պիտի գասաւորել. այդու արևահայեաց պատը յատկացնել խաղողի տեսակներին, պատի գիմացը ամարային տանձենիներին, կեռասի և դամոնի ընտիր տեսակներին. արևելեան և արևմտեան պատերը դեղձենիներին և ձմերային տանձիներին. հարաւայինը՝ ծիրանի և ինձորի ծառերին. թղենին այդու անկիւններում: Այդու միջի մասը շարքերի բաժանելով՝ առաջին շարքում տնկել վաղահամները, երկրորդում՝ յետահամները. քամու գիմաց՝ գիմացկամները և ուշ ծաղկողները, վաղ ծաղկողներին աւելի պատսպարան տալով:

Ծառի անկելը լինում է այսպէս. նախ պատրաստի փոսի տակը թափում են համեմած հողից, ծառը գնում են միջավայրում, արմատները ամեն կողմ աղատ յարդարում, ապա կամաց-կամաց լցնում հողը, երբեմն ծառը շարժելով, որ գատարկ տեղերը լցուեն: Ծառի արմատները գետնի տակ պիտի թաղուին մինչև պարանոցը, այսինքն այնտեղ՝ որ բաժանում է արմատը բունից: Թէ շատ խոր թաղելը և թէ հողը պինդ լցնելը այն վնասն ունի, որ օդի ջերմութիւնը գժւար համերայի արմատներին, կարող է խեղդուիլ. վնաս է նոյնպէս և խմայն ջրելը:

17. Ծառերի շարը և միջոցը: Այդու

գեղեցկութիւններից մէկն էլ ծառերի կանոնաւոր շարուածքն է. ընդունեած ձևը այժմ երկու է. քառանկիւնի և մի ընդմէջ մառանակիւնին, չնայելով իր կանոնաւորութեան, ներկայացնում է մի անյարմարութիւն, ծառերի մէջտեղերը բաւականին պարապ տեղեր են մընում, այնինչ մի ընդմէջի ժամանակ այդ պարապ միջոցը քիչ է, ուստի և շատ ծառ կարելի է տեղաւորել դարձեալ մէկմէկուց ունեցած հեռաւորութիւնը նոյնը պահելով: Ծառերի հեռաւորութիւնը մէկմէկուց, եթէ պարարտ հողի վրայ են և իրանք փռուող, լաւ է 9—12 արձին թողնել, չորաւուն հողում և նիհար ծառերի համար 7—10:

### ԾԱՌԻ ԶԵՒ ՏԱԼՅ.

18. Ծառին ձև տալու նպատակն է հաւասարակշռութիւն պահպանել նրա ճիւղերի մէջ և աճելութեանը կանոնաւոր ձև տալ:

24 տալը լինում է յօտելով, այսինքն ճիւղերի կամ շիւերի կտրատելով: Յօտելը լինում է սկզբնական և յաջորդականը կատարում է հէնց առաջին տարւանից, իսկ յաջորդականը ամենայն տարի շարունակ: Առաջինով մենք ծառին մեր ցանկացած ուղղութիւնը՝ ձեն ենք տալիս, իսկ երկրորդով՝ օդնում պըտղաբերութեան: Մենք կը խօսենք նախ սկզբնական յօտելու մասին:

19. Յօտելու դործնական եղանակը Ծառին մեր ուղած ուղղութիւնը տալու համար մենք այդու մկրատով կտրում ենք մի աչքի վըրայ, այսինքն ճիւղի առաջին աչքից, միայն հետեւեալ կամսոները պահելով. եթէ ուղում ենք ճիւղը երկարի, ուղղահայեաց դիրք ունենայ՝ յօտում ենք այն աչքից, որ ընկնում է դիմացը, եթէ ցանկանում ենք ճիւղը ծառի բունին մօտենայ, յօտում ենք մի աչքից, որ նայում է բունին, եթէ ուղում ենք աջ կամ ձախ դիրք ստանայ՝ յօտում ենք կողմնական աչքերից աջը կամ ձախը. մի խօսքով միշտ մի աչքի վրայ յօտելով, ճիւղը մեր կամեցած ուղղութիւնը կստանայ: Պտուղ շատ ստանալու համար մի կոկոնից պէտք է յօտել ճիւղը:

Ամենալաւ աչքերը դժնուում են ճղան հարթ

կեղևի վրայ, այնինչ ամենալաւ կոկոնները նրա  
կնճռոտ մասում:

Այժմ տեսնենք ինչպիսի ձև կարելի է տալ  
ծառերին:

20. Ծառերի ձևը: Եթէ մէկ.մէկ նկա-  
րագրելու լինէինք այն ամեն ձևեքը, որ տալիս  
են ծառերին, շատ երկար ու ձանձրավի կըլինէր.  
ուստի մենք միայն մէջ կը բերենք մի քանի  
պարզ ձևեր, որոնք ծառալում են իբրև այդու  
զարդարանք և ոչ իբրև մի անհրաժեշտ բան:

Ծառերին իրանց տեղի յարմար ձև պիտի  
տալ. օրինակ, եթէ դրանք պարտիզի տակն են,  
եթէ պատից հեռի և վերջապէս բոլորսվին բա-  
ցօղեայ,

Աչա մի ձև (Զե ա.) պատնդուս ասուած,  
որ յարմար է տանձենուն, խնձորենուն և կեռա-  
սենուն: Այդ ձևը ստանալու համար պատի եր-  
կայնութիւնով փայտէ ուղիղ ձողեր պիտի ձգել  
մէկմէկուց կէս արշին հեռի և դրանց վրայից  
վերէն փար երկաթէ լարեր անցնել չորս վերշոկ  
միջոցով և ծառի ճիւղերը հետզհետէ վրան փռել,  
և հարկէ յօտելով և աւելորդ շիւերը կտրատելով:

Այն ծառերը, որոնք պատնդուս են և արե-  
ւահայեաց, միշտ առատ և լու հասուն պտուղ-  
ներ են տալիս:

Արեւահայեաց պատին զուգահեռաբար մի ձե-  
մելիք թողնելով դիմացը՝ լարերի վրայ մի նոր  
շորք ևս կարելի է ձգել և ծառերին այսպիսի  
ձևեր տալ վրան: Այս ձեին (բ. գ.) լարանցի ի  
անունը տանք որոշելու համար:

Խնձորենիները աւելի ճիւն են ձևերի հա-  
մար, ուստի շատերը նրան միալար ձեն են տա-  
լիս: (Զե գ.) Այդ ձևը ներկայացնում է մի երկ-  
ճիւղ խնձորենի հողիզոնական ձևով թեքւած  
գետնից Յ—Յ վերշոկ բարձր նեցուկների վրայ:

Այդ ձևի համար առաջին տարին ճիւղը յօ-  
տում են մօտ 8 վերշոկից և ամենայն տարի  
թողնելով որ 5—8 վերշոկ երկարանայ՝ աւելը  
կտրում են մինչեւ, որ ծառը 10 արշին ձգւում է:  
Եթէ ուղում ենք միայն մի ճիւղը երկարի, այն  
ժամանակ միւսը պիտի կտրել:

Տանձենուն աւելի յարմարում է եռանկիւնա-  
ձեր և կոնուսաձեր (շաքարի գլխի պէս):

Դեղձենուն քառանկիւնին և թուփակ (բոլո-  
րակ) տեսքը:

Խաղողի վազին ամեն ձև կարելի է տալ,  
ուստի թողնում ենք այդ իւրաքանչիւրի ճաշակին:

Ինչ վերաբերում է այն ծառերին, որոնք  
բացօղեայ են, այսինքն այդու մէջտեղը և զար-  
գարանքի չեն ծառայում, դրանց համար հարկ

չկայ ժաման ակ կորցնել և մանրակրկիտ ձեւեր տալ.  
բաւական է, եթէ այս ընդհանուր կանոնները  
պահպանւին, որ ճղների մէջ կարգ և ներդաշնա-  
կութիւն լինի՝ հաստ և երկայն ճղները ներքեւ,  
միջակները մէջտեղ և մանրերը վեր, ճիւղերը  
մէկմէկու շխճճուին, լրյալ համահաւասար փուռի  
ամեն տեղ և որ դիմաւորն է, ծառերի շարքը  
հիւսիսից հարաւ նայի և ոչ արևելքից արևմուտք,  
ապա թէ ոչ մի շարքի շուրքը—ստուերը միշտ  
միւսի վրայ ընկած կը մնայ ի վնաս նրան,

---

թ.

### ՊՏՂԱԲԵՐՈՒԹԵՍՆԸ ՆՊԱՍՏՈՂ ՄԻԶՈՑՆԵՐ.

Մինչև այժմ մենք ծանօթացանք միայն ծա-  
ռի կմախքի հետ, այն է նրա բնի և մայր ճիւ-  
ղերի, բայց պէտք է դիտենալ, որ պտուղը չէ  
բանում ոչ բնի և ոչ էլ ընդհանրապէս ճիւղերի  
վրայ, այլ այդ ճիւղերի արձակած շիդի, շո-  
շիկի, պալարի և շիւի վրայ, ուստի մենք

նախ խօսենք գրանց մասին և ապա դառնանք  
այն միջոցներին, որոնք օգնում են պտղաբերու-  
թեանը:

21. Շիղը մի կոչկոչած, կարճ, մինչև մի վեր-  
շոկ երկայնութիւնով ծիլ է, որ անմշակ ծառի  
վրայ փշի տեսք ունի, ինչպիսին կարելի է տես-  
նել գեղձենու, շլորու և տանձենու վրայ: Նա  
չէ դուրս դալիս բնականաբար փուշ չունեցող  
ծառերի կամ տունկերի վրան—օրինակ, խաղողի  
վազի և թղենու, բայց ուր որ նա կայ, այդ ցոյց  
է տալիս ծառի առատ պտղաբերութիւնը:

Շիղի որոշիչ նշանը այս է, որ միայն մի  
կոկոն ունի իր ծայրին, իսկ աչքեր և ոչ մի հատ,  
ուստի և հեշտ է ճանաչել նրան իր կազմութիւ-  
նից:

22. Նօշիկը նոյնպէս կենծուած ծիլ է, բայց  
աւելի կակուղ և երկայն մօտ երեք վերշոկ եր-  
կայնութիւնով. սերմ ունեցող ծառերի մօտ, մա-  
նաւանդ տանձենու, շօշիկը շիղի պէս վերջանում  
է մի կոկոնով, թէև ունենում է կողքերից և ու-  
րիշները. սա ևս առանց աչքի է:

Կոճ ունեցող ծառերի մօտ, ինչպէս գեղ-  
ձենին, շօշիկը վերջանում է ընդհակառակը—մի  
աչքով, իսկ կողքերին ունենում մի այն կո-  
ռոններ:

23. Պալարը կամ խուլը ծառի ուռած դուրս ընկած մասն է զանազան ձեերով և մեծութիւնով։ Պալարը յատուկ է տանձենուն և ընկուղենուն, դրանից ուզզակի դուրս են դալիս երեքն կոկոններ, բայց ընդհանրապէս շիղեր և շաղիկներ, որոնք ինչպէս ասացինք պտուղ արտադրողներ են :

24. Նիւլը կամ ոստիկը ծառայում է գըլիաւրապէս ծառի ճիւղաւորութեան կամ փայտեղէն մասի աճելութեան։ Նա վերջանում է միշտ մի աչքով, որ բողբոյ դառնալով հետդիմէ աճում երկարում է։

Ճիւլը բացի իր վերջաւորիչ աչքը, կողքերից ունենում է ուրիշ աչքեր ու կոկոններ էլ։

25. Ճիշտ է ծառերին ձեւ տալուց յետոյ, եթէ ինքնագլուխ թողնենք և ոչինչ հօգս չքաշենք, մի քանի տարի շարունակ լաւ պտուղ կը տան, բայց վերջը վայրի ծառի կերպարանք կառնեն և գնալով աւելի կը վատժարանան, որպէսզի այդ չպատահի, անհրաժեշտ են և արհեստական միջոցներ գործ գնել պտղաբերութեանը նպաստելու։ Այդ միջոցներն են—յաջորդական յօտելը, ճիւղերի տալը, սղմելը և աչքերի կամ կոկոնների թափելը։

ա. Յաջորդական յօտելու նպատակն է

հաւասարակշռութիւն պահպանել ծառի բոլոր մասերի մէջ։ ծառհիւթին աղատ ճանապարհ տալ, որ ցածից վեր բարձրանայ և հաւասարապէս համնէ աչքերին ու կոկոններին։ հեռացնել այն մանր ու բաղմաթիւ շիւերը, որոնք արդելք են օդի ու լոյսի շրջանադարձութեան։ ճիւղերի կազմութեան համեմատ դասաւորել և նրանց վրայի պտուղը, կանոնաւորել պտղաբերութիւնը, որ չափից գուրս լինելը՝ ուժաթափ չանէ ծառը և վերջապէս ընտիր տեսքով ու համով պըտուղ ստանալ։

Յօտելով ծառի այս կամ այն մասը, միշտ նպաստած կը լինինք կամ պտղաբերութեան կամ փայտեղէն մասի աճելութեան։ Նիւլը երբէք չեն յօտում, իսկ մնացածները նայելով ծառի դրութեան շատ կամ քիչ հեռացնում են։

բ. ճիւղերի տալը այն գործողութիւնննէ որով ծառից հեռացնում են այն շիւերն ու ճիւղերը, որոնք ծառհիւթը ծծում են առանց մի օդուտ բերելու։

գ. Սղմելը կայանում է նրա մէջ, երբ բոյթ կամ ցուցամատով հուփ են տալիս բողբոյլը և նրա ծարը կոտրում, որով նա էլ չէ երկարում։

դ. Աչքերի կամ կոկոնների թափելը, երբ նրանք չափաղանց շատ են կամ վատ դասաւորւած։

26. Ըստ յօտման պտղատու ծառերից խաղողի վազը և գեղձենին մի կարդ են կազմում. սրանք չնայելով որ արտաքին տեսքով մէկմէկուց շատ տարբեր են, այնուամենայնիւ ըստ պտղաբերութեան բոլորովին նման պատկեր են ներկայացնում: Այս երկու տունկերը այն յատկութիւնն ունին, որ միենոյն տարին և պտուղ և փայտ միասին են աճեցնում և մի անդամ մի ոստ պտուղ տալուց՝ այլևս շարունակ պտուղ չէ արտադրում, ինչպէս միւս ծառերը են, ուստի և ստիպւած ենք ամենայն տարի յօտել և նրա տեղը նորը բացնել:

Մնացեալ ծառերը երկրորդ կարգն են կազմում. որանց յատկութիւնն էնախ փայտեղէն մասը ստեղծել և ապա պտուղը, որ մի քանի տարուց յետոյ է սկսում երեալ, բայց վազի և գեղձենու հակառակ այս կայ, որ մի ոստ երբ մի անդամ պտուղ տուեց, նա անվերջ պտղատու է մնում, ուստի և հարկ չկայ նրան յօտել և տեղը ուրիշին տալ:

27. Դեղձենու յօտելը: Դեղձենուն սկզբնական ձեւ տալուց յետոյ՝ յաջորդ գարնանը նրա ճիւղերի վրայ շատ աչքեր ու կոկոններ են բացւում: Մայիսին եթէ չափաղանց շատ են գրանք, ամեն երեք վերշոկից մինը պահելով,

մնացածները փչացնում են: Այդ պահած շիւերի վրայ էլ թողնում են երկու-երկու աչք և երկու-երկու կոկոն և աւելը յօտում, այնպէս որ շիւը մօտ երկու վերշոկ երկարութիւն է ստանում:

Ամառւայ ընթացքում ինչքան որ նոր աչքեր բասն այդ պահածներից դուրս, պէտք է յօտել և չթողնել, որ աճեն:

Պտուղ տալուց յետոյ բոլոր շիւերը յօտում են տակից և միայն սոսկ ճիւղերը թողնում: Յաջորդ տարին դարձեալ նոր շիւեր են դուրս գալիս, որ նոյնպէս երկու աչք և երկու կոկոն պահելով՝ յօտում են ըստ վերնոյն:

Երբ գեղձենին այդպէս յօտելուց շատ տարիներից յետոյ սկսում է կոչկչել, այնպէս որ գժւարացնում է ծառհիւթի պտղտելը, այնժամանակ նոր ճիւղացուներ են պահում և հիները կտրում:

28. Վազի յօտելը ոչ միայն օդտակար է, այլև անհրաժեշտ, ինչու որ իր գլխու թողնելով աւելի վատ պտուղ է տալիս և վայրի կերպարանք է ստանում:

Վազի յօտելը լինում է միշտ ջուր ընկնելուց առաջ: Այն կողմերում, ուր ձմեռը մեղմ է և երկիւղ չկայ ցրտահարութեան, լաւ է աշնանը ձգել, իսկ ցուրտ կողմերում պահել

մինչ և գարնան տաք օրերը :  
Յօտելու համար պիտի դիտենալ հետեւ ալ  
պայմանները.

ա. Որ պտուղը լինում է բարունակների  
կամ շիւերի վրայ և այդ բարունակները, որ մի  
տարի պտուղ են տուել, դրանց պիտի պատրաս-  
տել և եկող տարուայ համար միայն զուարթ-  
ները իհարկէ պահելով։

բ. Այս ամեն շիւերը, որոնք բսել են տար-  
ւայ ընթացքում բնափայտի վրայ կամ նրա  
տակից, գրեթէ միշտ անպտղաբեր են, ուստի և  
պիտի տակից յօտել առանց մի որևէ աչք  
պահելու։

գ. Պէտք է աչքի առաջ ունենալ, որ վազը  
կարող է միայն մը քանի շիւերի կեանք տալ,  
ուստի վազի գրութեանը նայած 2—6 շիւ կա-  
րելի է պահել և ամեն մէկի վրայ երկու աչք  
թողնել, եթէ չենք ուզում, որ շատ երկարին  
կամ բազմաթիւ նոր շիւեր ձգեն։

Վազի յօտելը լինում է մկրատով կամ կեռ-  
դանակով, և այդ միշտ աչքի վրայ և ոչ ներքե-  
կամ վերը։

Երբ ուզում ենք վազը երկարի, կարծիք  
չկայ, որ յօտելուց շատ աչք պիտի պահել, ինչ-  
պէս և այն գէպքում երբ նա զուարթ է բաւա-

կանին, կարճ և երկար յօտելը կախուած է վա-  
զի գրութիւնից և տեղական պահանջներից։

29. Տանձենու յօտելը։ Տանձենին իր  
կարգի ծառերի մէջ տիպար կարող է լինել իբրև  
յօտելու աւելի յարմար, քան միւսները։

Տանձենու յօտելը լինում է աշնանը կամ  
աւելի լաւ դարնանը, երբ աչքերը և կոկոնները  
աւելի որոշակի են երկում ծառի վրայ։

Յօտելը լինում է այսպէս, ասենք թէ մի  
տանձի արդէն կատարեալ պտղաբերութեան  
մէջ է եղել և մայիսին նրա ճիւղերի վրայ երե-  
ւում են շիղեր, չօշիկներ, պալար և շիւ։

Առաջին երեքից յայտնի է, որ պտուղ է  
առաջ գալիս, ուստի և դրանց պահում են ամեն  
երեք վերշոկից մին և աւելորդը յօտում, ինչպէս  
և շիւերը. Բայց երբ ճիւղերի վրայ բաց տեղ է  
մնում և պտղատու շիղեր կամ չօշիկներ չկան,  
այնժամանակ պակաս տեղերի համար շիւեր են  
պահում։

Եի զը չեն յօտում, որովհետեւ ծայրին  
կոկոն ունի և ինքը կարճ է։

Եօշիկը յօտում են միայն այն ժամա-  
նակ, երբ երեք վերշոկից անցնում է, բայց միշտ  
վրան երկու լաւ կոկոն պահած։

Պալարը չեն յօտում, երբ ուղղակի կո-

կոն է տալիս, բայց յօտում են նրանից երկարացած շօշիկները։ Միւս բոլոր պաղատու ծառերի յօտելը կատարւում է դրեթէ տանձենու ձեռվ, ուստի հարկ չկայ առանձին առանձին խօսել, մանաւանդ որ դրանց համար յօտելը այն նշանակութիւնը չունի, ինչ որ վազի և դեղձենու։

---

Ժ.

ԾԱՌԻ ԱՆՊՏՂԱԲԵՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԼ ԵՒ

ՈՒՂՂԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ .

Եատ անգամ պատահում է, որ մի առողջ ծառ կամ ճիւղերից մի քանին պտուղ չեն տալիս, չնայելով որ ոչինչ արտաքին հարւած չէ դիպել, դրա պատճառները կարող են լինել—ծառ հիւթի առա տութիւնը, ծառհիւթի պակասութիւնը, ուժաթափ լինելը և վատ դերքը։

30. Երբ անպաղաբերութիւնը ծառհիւթի շատութիւնիցն է և միայն փայտեղէն մասն է զարդանում, այնժամանակ նրան կարելի է չափաւորել հետեւեալ միջոցներով.

ա. Յօտելուց շիւերը երկար պահել, որ ծառհիւթը նրանց վրայ առաւելապէս սպառուի և պաղատու շիղերը կամ շօշիկները թուլանան։

բ. Յօտելը կատարել և կանաչ ժամանակ, այսինքն երբ ծառը արդէն ջուր է ընկել և տերեները բացուել. դրանով բաւական ծառհիւթ է կորչում։

գ. Մի քանի շիւերի կոտրելը, առանց ծառից պոկելու կամ նրանց դէպի ներքեւ կէս լըլջանակածե կուացնելը, արդելք է լինում նրանց առաջ գնալուն, որ միշտ սիրում է վեր բարձրանալ։

դ. Դանակով ծառի ընափայտի և հաստ ճիւղերի վրայ կեղեփի խաղխպելը, որ վիրաւորելով, խաղած տեղից շատ հիւթ (իսէժ) է թափում։

31. Ծառհիւթի պակասութիւնով ծառի անպաղաբերութիւնը կարելի է ուղղել.

ա. Պարարտացուցիչ միջոցներով՝ ինչպէս յիշած ենք երկրորդ գլխում։

բ. Ծառի աւելորդ շիւերի և ճղների տալով,

որ մնացածներին առատ բաժին լինի ծառհիւթից:

գ. Պատւասաած տեղից երկու վերշոկ վեր ծառի բոլորովին կտրելը, որ նոր նոր շիւեր դուրս դան:

32. Ծառի անպտղաբերութիւնը կարող է առաջանալ իր ուժաթափութիւնից, երբ անցած տարին առատ պտուղ է տուած լինում: Այդ հանդամանքում նրան հանդիսատ պիտի տալ, լաւ պարաբտացնել, պտուղը չափաւորել և աճելութիւնը մեզմացնել յօտելով, որ նորից ուժաթափ չլինի:

33. Վերջապէս երբ ծառի դիրքը անյարմար է և իր սիրած հողի մէջ չէ, նրան պիտի տեղափոխել և սաստիկ քամիների ու ցրտահարութեան դէմ պաշտպանել:

ԺԱ.

ԾԱՌԵՐԻ ԲԱԶՄԱՅՆԵԼ,

Ծառերի բազմացնելը լինում է չորս կերպ. կորիզով կամ սերմով, կտրոնով, տաշտա-

թաղ անելով և պատւաստելով:

34. Կորիզով բազմացնելը, որ աւելի բը նական է, շատ քիչ է գործադրում, ինչու որ երկար ժամանակի և խնամքի պէտք ունի: Նրան միայն գործադրում են նոր տեսակներ առաջ բերելու, որոնք միշտ անկատար լինելով, ծառայում են իբրև լաւ պատւաստակալ, այսինքն վրաները պատւաստ տնկելու ծառեր:

Սերմով բազմացնելու համար գարնանը նրան լաւ պարաբտացը հողի վրայ ցանում են մօտ կէս վերշոկ խոր և աշնանը. հանելով տաք տեղ պահում անձրեսից հեռի, իսկ յաջորդ գարնանը, երբ արդէն ծլել է և շիւ ձգել, վերջնական կերպով տնկում են այդում նշանակած տեղը:

35. Կտրոնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ ծառի մի շիւը չորս հինգ աչքով և այդքան կոկոնով, որ աշնանը կտրելով դնում են աւազի մէջ և ամբողջ ձմեռը պահում, իսկ գարնանը կէսից ներքեւ տնկում այդում, ուր արմատ բռնելով զարգանում է և ունենում այն ծառի յատկութիւնը, որից ինըն է:

Կտրոնացուի համար աւելի լաւ են ծառի այն բողբոջները, որոնք կիսով չափ գետնի մէջն են եղել և կամ բուսել բնի տակից:

Կտրոնով բազմացնելը գործադրւում է միայն վազի և թղենու համար. միւս պաղատու ծառերը աւելի կոշտ լինելով, գժուարութիւնով են արմատ ձգում հողի մէջ:

36. Տաշտաթաղ անելը (անտալիս, լուդան) միւնոյն բանն է, ինչ որ կտրոնով բազմացնելը, այնտեղ ծառից շիւը կտրում են հողում տնկում, որ արմատ բռնէ, իսկ այստեղ նախ շիւը գետնում թաղում են և արմատ բռնելուց յետոյ կտրում:

Տաշտաթաղ անելու համար աշնանը ծառի յօշտելու ժամանակ մի զուարթ ու երկար ոստ են պահում և գարնանը նրա տակը մի երկար փոս փորելով այդ ոստը թաղում նրա մէջ և ծայրը գետնից դուրս բերում մի երկու աչք թողած՝ կտրում. Ամառը այդ աչքերից շիւեր են բացւում, իսկ գետնում թաղւածներից արմատներ։ Յաջորդ տարին ծառից կտրում են տաշտաթաղ արած ոստը և այնուհետեւնա ապրում է առանձին իր հաշտով։

Ոչ միայն մի ոստ, այլ ամբողջ մի ճիւղ կարելի է գետնում տաշտաթաղ անել և երկրորդ տարին երբ բազմաթիւ շիւեր է ձգել, առանձին առանձին իր արմատով պոկել և տանել մեր ու զած տեղը տնկել։ Սակայն տաշտաթաղ անելը

բացի վազից՝ միւսների ըամար անգործադրելի է, իսկ վազի համար այդ անումեն միայն այն ժամանակ, երբ շարբերի մէջ ուզում են պակաս տեղերը լցնել և կամ թէ չէ ուժաթափ հին վազերը ամբողջապէս թաղելով նորոգել։

Ճ.Բ.

#### ՊԱՏՈՒԱՍՏ.

Պատուաստելով (մատ դնել, զալամ անել) ծառերի բազմացնելու ձեռ արդեգործութեան արհեսթի մէջ մարդու հնարած ամենամեծ գիւտն է և միանդամայն հրաշալին։

Մարդս հեշտութիւնով ձեռք բերաւ թէ սերմով, թէ կտրոնով և թէ տաշտաթաղ անելով ծառերը բազմացնելու եղանակները, բընութեան մէջ յաճախ պատահելով նրանց, բայց պատուաստելը, այն է՝ մի ծառի հաշտով միւսին ապրեցնելը ոչ մի տեղ չէր կարող տեսնել և միայն նրա ճարտարութեանը պիտի վերագրել։

37. Սակայն ամեն ծառ չէ կարող նոյն յաւ-

չողութիւնով մի ուրիշը մնուցանել. ծառհիւթի տարբերութիւնը, և աճելութեան եղանակը մեծ դեր են խաղում պատւաստելու մէջ: Փորձուածէ, որ մի ցեղի պատկանող բոլոր տեսակները, ասենք թէ տանձենիներ, մշակուած թէ անմըշակ մէկ մէկու վրայ լաւ են բռնում քան մի ուրիշ ցեղի. թէև կան այնպիսիք, որ լաւ պատւաստակալ են օտար ցեղի համար, օրինակ սերկելին՝ տանձենու համար, նշենին՝ դեղձենու և ընդհակառակն: Ընդհանրապէս սերմ ունեցողները մէկը միւսի վրայ լաւ են բռնում, այնինչ կորիգաւորները բացառութիւն են կազմում:

38. Պատւաստելու ժամանակը: Ծառերը պատւաստում են թէ աշնանը և թէ գարնանը քանի որ ծառհիւթը գեռ շարժողութեան մէջ է: Աշնան պատւաստածը այս առաւելութիւնն ունի, որ ծառը քիչ է յոգնում և եթէ պատւաստը չըռնեց, գարնան նորից կարելի է պատուաստել. բայց այս վտանգը կայ, որ ձմեռը ցուրտ տեղերում թէ պատւաստը և թէ պատւաստակալը միանդամայն կարող են փչանալ:

Պատւաստը (մատ, զալամ) ասում ենք ծառի այն կտրոնին, որ ծառայում է պատւաստելու համար, իսկ պատւաստակալը՝ որի վրա

օտար շիւը պատւաստում ենք:

39. Պատւաստելու ընդհանուր պայմաններն են՝ ա. Ընտրել պատւաստացունախնթաց տարւան այն շիւերից, որոնք գտնուում են ծիւղերի մէջտեղը, ջոկելով աւելի զուարթը և լաւ հասածը: բ. Պատւաստացունաճելութեան կողմից նուազ պիտի լինի քան պատւաստակալը, ապա թէ ոչ բաւարար հիւթ չնդունելով՝ շուտով կը չորանայ. գրա համար էլ լաւ է պատւաստացուն մի ամիս առաջ կը տրել և հողի մէջ թաղել բոլորովին, որով աճելութիւնն առաջ չի գնալ, այնինչ պատւաստակալը մի ամսով առաջ կընկնի: դ. Պատւաստը պիտի գնել պատւաստակալի արկելեան կողմից ուր ծառհիւթը տւելի առատ է հասնում: դ. Պատւաստակալն ու պատուաստը այնպէս կտրել որ կաշին չծեղըուի կամ չվիրաւորի: ե. Պատւաստակալը գնելուց յետոյ կաւացեխով վելքը լաւ պիտի ծածկել, որ անձրեւ կամ որդ չմտնէ ներսը: դ. Պատւաստը առաջին 15 օրը ծածկած պահել արկեց, թղթէ փափախ գնելով գլխին, որ միւնյն ժամանակ որդներից և թռչուներից ևս ազատած կինին կոկոնները: է. Որպէսզի քամուց և թռչունների վրան նստելուց տեղահան չինի, լաւ է մի շրջանակաձև ձողիկ ամրացնել:

պատւաստակալի վերեխց և նրանից կապել պատւաստը: ը. Պէտք է հսկել պատւաստակալի վրայ դուրս եկած բողբոջները փշացնելով, որ ծառի հիւթը չծծեն ի՞մաս պատւաստի:

Պատւաստի ձեերը շատ են, մենք նըրանցից մէջ կըքերենք աւելի գործածականները:

40. Հառարակ պատւաստը, որ ամենաշին և աւելի տարածւածն է, այդ ձեի համար 3—4 աշքերով մի պատւաստացու են ընտրում և երրորդ աշքից քիչ ներքե սուր գանակով մինչև ծայրը շեղադիր տաշում երկու կողմից, այնպէս որ նա սեպի կերպարանք է առնում, բայց մի կողմն աւելի լայն պահելով քան միւսը: պատւաստակալի գլուխը սղոցով ուղիղ կտրում են և մէջտեղից գէպի ներքե յօտոցով ճզում մի վերշոկաչափ, նախ կաշին խազելով, որ շիշանայ Այդ ճեղքի մէջ մտցնում են պատւաստը՝ լայն կողը գուրսը պահելով, իսկ նեղը՝ ներս. վերջը կաւացելով ծածկում են վէրքերը, մամուռով պատւաստի շուրջը պատռում և թոկով կապում:

Փոխանակ մի պատւաստի, լաւ է ճեղքի երկու կողմից երկուսը դնել որ եթէ մէկը լը բռնեց, միւսը գուցէ յաջողի:

41. Պատւաստ: Այս ձեի համար հորիզոնական կերպով կտրում են պատւ-

ւաստակալի գլուխը կամ թէ չէ հաստ ճիւղերը և փոխանակ նրանց ներքե մէջտեղից ճեղքելու, միայն կաշին են մաշկում առանց վերցնելու ծառի վրայից և նրա տակը մտցնում պատւաստացուն: Այդ պատւաստացուի երրորդ կոկոնի տակից նախհորիզոնական ձեռով  $\frac{3}{4}$  մասը կտրում են և ապա գէպի ներքե սրնդածի տաշում, այնպէս որ կաշու տակ մտցնելով նա նստում է պատւաստակալի վրայ: Այս ձեռով մէկը միւսից մի վերջոկ հեռի՝ կարելի է մի քանի պատւաստներ տեղաւորել, որով պասկի ձե է առնում նա: Պատւաստականներն աւելի լաւ են բռնում քան հտարակները:

42. Անդ զիական պատւաստի մէջ թէ պատւաստակալը և թէ պատւաստացուն միենայն հաստութիւնը պիտի ունենան, այդ էական պայմանն է: Այդ ձեի համար երեք տչք ունեցող կտրոնի երկրորդ կոկոնի տակից երկար շեղով տաշում են մինչև ծայրը և մէջտեղից ճզում մինչեւ կէսը. նոյնը անում են և պատւաստակալի վրայ միայն հակառակ կողմից, այնպէս որ երկու շեղադիր կողմերը մէկմէկու փակում են: Այս ձե պատւաստը շատ առաւելութիւններ ունի առաջիններից, բայց դժբաղտաբար դժւար է ամեն անգամ միենայն հաստութիւնով պատ-

ւաստակալ դանեել:

43. Աչքապատւաստ . Բացի կտրոնը, կայ և աչքով կամ կոկմով պատւաստել: Դրա համար օգոստոսին պոկում են շիւից մի լաւ աչք խորը վերցրած իր չորս կողմի կաշով և տերեսով. տերելը պոկումեն կոթը միայն թողնում, որ կարելի լինի ձեռով բռնել աչքը: Պատւաստակալի կողքի վրայ նախ Դ ձեռվ խազում են կաշին և բարձրացնելով՝ աչքապատւաստը դնում տակը և լաւ կապում: Երբ բռնում է, յաջորդ տարին պատւաստած տեղից քիչ վերը կտրում են պատւաստակալը: Այս ձեւը լաւ է մատաղ վայրի ծառերի վրայ կատարել, որ երբ չբռնեն, դարնանը կարելի է անդդիական պատւաստը փորձել, այդ էլ չյաջողւեց հասարակը կամ պսակաձեր:

---

ԺԳ.

ԾԱ.ՌԵՐԻ ԵԽ ՊՏՈՒՂՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ  
ԽՆՍ.ՄՍ.ՏՈՒԹԻՒՆԸ.

Ծառերի ընդհանուր խնամքները են նրանց

պարարտացնելը, յարդելը, տակները փորելը և ջրելը:

44. Պարարտացնելու համար ծառերի տակը բաւականին մեծ տարածութիւնով փորում են աշնանը կամ գարնան սկզբին և գոմանոցի աղբ փոռում տակը:

Յարդելը կայանում է նրա մէջ, երբ գարնանը ամբողջ այդին կովանոցի կամ ախոռատան աղբով ծածկում են. այդ աղբի մէջ եղած յարդը պահպանում է հողի թարմութիւնը և չէ թողնում որ չորանայ գետինը և անմատչելի գառնայ օդին ու խոնաւութեան: Նա միենոյն ժամանակ լաւ պարարտացուցիչ նիւթ է ծառերի համար:

Փորել տարին մի անգամ ամբողջ այդին անշուշտ հարկաւոր է. այդ փորելուց յետոյ է, որ կատարւում է յարդելը:

Ջրելը լինում է երաշտներին. դրա համար ծառի շուրջը մօտ քառորդ արշին խոր և երկու քառակուսի արշին լայն փոս են բացանում և ջուրը ներս թողնում: Լաւ է միանգամայն առատ ջրել, քան թէ մի քանի անգամ քիչ-քիչ, ինչու որ շուտ շուտ և թեթև ջրելով ծառի արմատները փոխանակ խորը իջնելու, երեսն են դուրս գալիս նոր-նոր բողբոջների ձեռվ:

Ընդհանուր խնամքների մեջ պիտի հաշւել  
և ծառերի չոր մասերի յօտելը:

45. Պտղին տալիք խնամատարութիւնները  
շատ են, նրանցից կը յիշենք հետեւեալները.

ա. Երբ պտուղը չափից գուրս շատ է, ծառը  
կարող է ուժաթափ լինել և այնուհետեւ քիչ  
պտուղ տալ, ուստի երբ պտուղը կազմակերպ-  
ւում է, նր անցից, որոնք խռնւած են, պիտի  
պակասացնել, գրանով մնացածները գեղեցիկ  
տեսք և մեծութիւն են ստանում:

բ. Պտուղը որդնակերսութիւնից ազատ պա-  
հելու համար նր անց կպած տերեները պոկում  
են, բայց բոլորովին բաց չը թողնելով պտուղը,  
որ արել խանձէ: Տերել հովանու պէս պիտի  
պաշտպանէ նրանց:

գ. աչքի առաջ ունենալով որ տաքութիւնը  
շուտ է հասցնում պտուղը, ճղներին արեահա-  
յեաց գիրը են տալիս և ծառի տակ սե նիւ-  
թերով ինչպէս ածխափոշիով և սեւահողով ծած-  
կում:

46. Պտղի հասունութիւնը գիտենալ և իր  
ժամանակին քաղել մեծ վարժութիւն է հարկա-  
ւոր. շատ խակ քաղելով նա կնճռոտումէ, գունատ  
ւում և երեք չէ հասունանում, իսկ շատ հասած  
քաղելով, ընդհակառակը, փափկանում է և փտում:

Գործնական ճանապարհը այս է. այն պը-  
տուղները, որոնք բնականաբար դիմացկան չեն,  
ինչպէս են կեռասը, բալին, թուզը, գեղձը,  
գամոնը, ամարային տանձերի ու խնձորի տե-  
սակները պէտք է պահել մինչև կատարեալ հա-  
սունութիւնը, երբ սկսում են մի թեթև շաղա-  
հարւելուց կաթուկ տալ: Իսկ պահելու պտուղ-  
ները, ինչպէս են ձմեռնատանձերը, խնձորները  
և սերկեիլը կատարեալ հասունութիւնից քիչ ա-  
ռաջ պիտի քաղել, երբ շողշողուն կերպարանը  
են առած:

47. Պտղաքաղը լինում է պարզ օր, ա-  
ռաւուեան ցօղն անցնելուց յետոյ մինչև երե-  
կոյեան զով ընկնելը: Պտուղները քաղում են  
մէկ. մէկ իրանց կոթով, զգուշանալով նրանց  
չփիրաւորել: Հասարակ պտուղների համար քա-  
ռառնկիւնի մեծ կտաւ են բանում ծառի տակը  
կամ շորս ցցերի վրայ հաստատում և ճղները  
ստով կամ ձեռովի թափահարում:

48. Պտղատուն: Պահելու պտուղների  
համար այնպիսի տեղ պիտի ընտրել, որ արգելք  
լինի պտղի, շուտ հասունութեան, որին նպաստում  
է լոյսը, ջերմութիւնը և օդը. ուրեմն հասկանա-  
լի է, որ պտղատունը այդ երեք տարրերից եթէ  
ոչ բոլորովին, գոնէ մեծաւ մասամբ հեռի պիտի

պահել։ Իբրև ընտիր պտղատուն կարող են ծառայել չոր և միջանցիկ օդից ազատ մառանները և թէ գետնից բարձր շինած նոյն յարմարութիւններն ունեցող շինքերը։

Պտղատան ներսը պատերի երեսին պէտք է տախտակէ դարիքներ շինել փայտից մէկմէկուց կէս դաղ բարձր, երեսին յարդ փռել ու վրան շարել պտուղները-տանձը՝ կոթը, փեր, իսկ խնձորը ներքե։ Պտուղները մէկմէկու պիտի չդիպչեն, առաջին շաբաթը լաւ է դուռ ու պատուհան բաց թողել քամի տայ. որ քիչ կնճռոտեն, իսկ յետոյ ամուր փակելով՝ միայն ժամանակ-ժամանակ բանալ չոր ու տաք եղանակներին, որ ներսի օդը փոխուի։

Ցրտահարութիւնից պաշտպաննելու համար կամ թղթով պիտի ծածկել պտուղները կամ կրակակալ դնել պտղատունը տաքացնել. Շուտ շուտ ակը պիտի տալ պտուղներին, փտողները փոկոյն հեռացնել, որմիւմներին չանցնի հիւանդութիւնը։

Պտուղները բացի այլ ձևից՝ պահում են և կարասներում, կթոցներում, բանդաղ արած (հաւաքած ցանցի մէջ) մոխրի, աւաղի՝ կամ թէ սղոցւածքի ու թեփի մէջ։

Ինչ տեղ էլ ինչպէս էլ որ պահելու չլինինք

պտուղները, պէտք է նրանց հեռի պահել ցըրտից, խոնաւութիւնից, միջատներից և փոփոխական օդից։

Խաղողը պահելու համար նախ ճթերի միջից հեռացնում են թէ փտած խաղողները և թէ մէկմէկու սղոցւածները, որոնք մնալով ենթակայ են լինում փտութեան։ Այդ ճթերն արեի տակ առժամանակ փռում են, որ չմշկին և ապա թղթէ քսակների մէջ կախում են կոթից պտղատանը կամ փռում յարդի վրայ։

Եթէ եղանակը ներում է այգեկութից առաջ թղթէ կամ կանւայէ քսակների մէջ են դընում ճթերն ու վազի վրայ այնպէս թողնում մինչև ցըրտերի ընկնելը և ապա փոխադրում են պտղատունը։

ԺԴ.

ԾԱՌԻ ՀԻՒՍՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ  
ԴԱՐՄԱՆՔ .

Ծառերը, ինչպէս և բոլոր բոյսերը, ենթակայ են դանաղան հիւանդութիւնների, ինչպէս երաշտից՝ խանձուելուն, սառնամանիքից՝ ճաքճըքելուն, վատ ու մաշւած հողից՝ տերեկի վազահաս թափւելուն, անգդուշե անկանոն յօտելուց ծիւղերի չորացման և ծառհիւթի նուազման, խոնաւութիւնից՝ բորբոսով ծածկուելուն. բացի այս, նրանք բազմաթիւ թշնամիներ ունին միջատների մէջ տարբեր-տարբեր ճաշակներով,—նրանցից մի քանիսը արմատներն են կրծում, միւսները կեղեր, երրորդը տերեկը, չորրորդը կոկոնն ու բողբոջը, իսկ աւելի զարդացած ճաշակ ու նեցողները պտուղը:

49. Ծառի կեղեր երբ ճաքճուում է ցրտից. կարկտից կամ վիրաւորւելուց, օդի անձրեկի և խոնաւութեան ներդործութեան տակ հետզհետէ վէրքը դէպի ծառի սիրտն է անցնում և լայնաւ-

նալով փտում ու փչակներ կազմում, որից և չորանում ընկնում է նա:

Ծառի այդ հիւանդութեան դարմանն է—վիրաւորւած մասը լաւ կտրել վերցնել և վրան սպեզանի դնել: Սպեզանին պիտի պատրաստել դաճից, քակորից (աթար), մոխրից և աւազից. երեք ֆունտ քակորին պիտի վերցնել մի ֆունտ գաճ, մէկուկէս ֆունտ փայտի մոխրի և քառորդ ֆունտ տւաղ. այս վերջինները լաւ կրծած, մանրացրած պիտի քակորի հետ խառնել և խմոր պատրաստելով ծեփել վէրքը:

50. Երկարատեև երաշտին ծառերի երակներն սկսում են կուշ գալ, ծառհիւթը կորցնում է իր ջրալի տեսքը և բարձրանալով այլևս առաջ չէ գնում, որից և ճղները սկսում են չորանալ ինչպէս ծիրանի և դամոնի ծառերը: Այդ հարւածից աղատելու համար պէտք է բնի չորս կողմը ծածկել տախտակներով և մեծ ծիւղերը քակորի և կաւի շաղախով պատել: Լաւ է նոյնալէս կրաջրով սպիտակացները, որով նա զով է մնում, ինչպէս մի ճերմակեղէն հագած մարդը ամառ ժամանակ:

51. Ծառերին վնասակար միջատները բազմաթիւ են, մենք կը խօսենք միայն դրանց դէմն առնելու մի քանի միջոցների մասին:

Պաղատու ծառերի մէջ մանաւանդ խնձորենուն ու տանձենուն ամենից շատ զնասում են տեսակ-տեսակ թը թ ու բները, որոնք խժուում են ծառի տերեւն ու կոկոնը և շատերն էլ պըտուղը որդնացնում։ Այդ թը թուրների կեանքը, թէև կարճ են, բայց իրանք բաւականին բազմա, թիւ լինելով, զգալի զնասներ են տալիս։ Աշնանը էգ թիթեռը հարիւրաւոր ձուաններ է դնում, որոնցից գալնանը մանրիկ որդեր են գուրս գալիս և երեք չորս անդամ փոխելով իրանց մորթը շերամի որդի նման բերաններից բարակ թել են դուրս թողնում, ոստայն կազմում և մէջը փակւում պատենաւորւում։ Մի քսան օրից նրանք գուրս են գալիս իրանց պահարանից ոչ թէ տոռաջւայ պէս թը թուրի ձեռվ, այլ թիթեռի, որոնց տեսնելուց շատ անմեղ էակներ ենք կարծում, գրանց էգերը բաւականին ձուաններ թողնելով, իրանք մեռնում են, իսկ ձուաննից յաջորդ գարնանը նոր որդեր—թը թուրներ են առաջ գալիս ու ծառի տերեւն խժուելով շարունակում նախորդների արշաւանքը։

Այդ թը թուրները փչացնելու համար փոքր ժամանակը սրսկում են փարիզի կանաչ կամ թամբաքուի թանձը ջուր, որ կոտորում է նրանց բացի այդ օգնումէ նաև երբ յունիս ամսին դը-

րանք քաշւում են իրանց ոստայնի մէջ և պատենաւորւում, այդ ոստայները քանդել և կրակ տալ։

Իսկ թիթեռները փչացներու համար օգոստոսին ծառի մօտերը լաւ կրակ պիտի վառել երեկոյեան, որի վրայ են հաւաքւում և մեծ բազմութիւնով կոտորուում։

52. Բացի թը թուրներից, մը ջունները, բոռերը (շանաճանճ), փայտոջիւները, ծըտերը և կրծող կենդանիներ իրանց բաժին չարիքն են հասցնում։ Բոռերի և մըջունների դէմն առնելու համար լաւ է ամաններում շաքարաջուր ածել և տեղ-տեղ կախել, փայտոջիւնները միշտ պատսպարան են գտնում ճաքճքած կեղեկի մէջ, պէտք է երկաթէ քերիչով մաշկել կնծիոնները և հարթել կամ կոշտ խոզանակով մաքրել։ Կրաջուրը կամ մոխրաջուրը ևս զօրաւոր գեղեր են մի քանի միջատների դէմ, միայն պէտք է պտուղը քաղելուց յետոյ կատարել այդ։

Ծտերին փախցնելու լաւ միջոցն է երբեմն երբեմն հրացան արձակելը, իսկ կրծողների դէմն առնելու համար որոգայթներ լարելը։

53. Մեր օգնականները։ Ծառերի այս անթիւ երկելի և աներկելի թշնամիների դէմ

կուելու համար մարդուս զօրաւոր օդնականներն  
են գետնի տակ—խլուրդը, որ լաբում է իր  
ստորերկրեայ պալատան անցքերում հանդիպող  
միջատներին. դրսում—ողնին, այդու այդ ան-  
վարձ պահապանը, գորտը, խլեզը, թռչուն-  
ներից ծիծեռնակը, սարեկը, սոխակը, փայտ-  
փորը և ուրիշ շատերը, իսկ գիշեր՝ ժամանակ  
բուն (պայտուշը) ու չղջիկը :

Թէ պէտք է սիրենը, պէտք է մեր հովա-  
նաւորութեան տակ առներք մեր այդ օդնական-  
ներին, որոնց հալածում, արհամարում է տղէտ  
ամբոխը, հասկանալի է: Առանց թռչունների,  
առանց միջատներին ջարդող կենդանիների օգ-  
նութեան անհնարին կը լիներ մարդին յաղթող  
դուրս դալ այդ մանրիկ էակների հետ պատե-  
րազմի մէջ և տերեւով ու պտուղով զարդարւած  
ծառի գրաւիչ տեսքին արժանանալ:



13947

ԳԻՆՆ Ե 5 ԿՈՊ.